



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

91.99

6-97

1925



891.542-3

Ծ-9 57

16 NOV 2011

Հ. ՃՈՒՂՈՒՐՅԱՆ

ՉԱՏՈՅԻ

ԲԱԽՏԻ

ԱՆԻՎԸ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

2328

891.99
2-97
1000

281 2/11/80

252 26/VI/81

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑ. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Չրոխտարներ բոլոր յերկրներէ, միացեր.

891.99

Հ. ՀՈՒՂՈՒՐՅԱՆ

պր.



ԴԱՏՈՅԻ ԲԱԽՏԻ ԱՆԻՎԸ

1001
2328



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Յ Ե Ր Ե Վ Ա Ն — 1925.

29 NOV 2013

41196

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Հարություն (նախկին քահանա) ձուգուրյանի այս պատմվածքը տպագրվել է 1909 թվին, Թիֆլիսում, բայց լույս չտեսած արգելվել է գրաքննիչի կողմից՝ հակապետական և հակակրոնական բովանդակութան պատճառով: Յարական կառավարութունը 1905 թվի հեղափոխութան յերկյուղից մի քանի պոչատ և պայմանական «ազատութուններ» տվեց յերկրին: Այդ «ազատութունները» մեկն եր և «ամուլի ազատութունը», վորի համաձայն հեղինակը կամ հրատարակիչը ձեռագիրը, առանց գրաքննիչին ներկայացնելու հանձնում ելին տպարան: Սակայն լույս տեսնելուց հետո, գրքերը, հատուկ հրահանգի համաձայն, յենթարկվում ելին խիստ զրաքննութան և, ի հարկե, յեթե լինում եր մի վորեւ անմեղ բան նույնիսկ, — գիրքը զրավվում եր ու թե հեղինակը, թե հրատարակիչը յենթարկվում ելին կամ մեծագումար տուգանքի կամ բանտարկութան: Այդ վիճակին յենթարկվել է և ձուգուրյանի գիրքը: Հեղինակի դեմ հարուցված դատը վերջանում է նրանով, վոր զրավված գրքերը վոչնչացվում են:

Հարություն ձուգուրյանը մեր հին գրողներից ե: Ծնվել է 1864 թվին, Ղաղախի Խաչաթառակ գյուղում: Գրել է առանձնապես գյուղի կյանքից: Հայտնի են նրա «Մոռացված Աշխարհ» վերնագրով պատկերների յերեք գրքերը և «Ըիրինանց Նախշունը» վեպը: Իր զրվածք-

№ 231. Գրառեսպվար № 1921. Տիրաժ 3000.

Պետհրատի յերկրորդ տպարան Յերևանում.

ներում նա նկարագրում ե գլխավորապես աղքատ գյուղացիութան ծանր վիճակը, գյուղական կուլակներին հարստահարութունները, ցարական շինովնիկներին արհամարհանքը դեպի այդ գյուղացիները և հայ գյուղի հետամնացութունն ու խավարը:

Վերջին տարիներս ձուգուելանը տեսներով Խորհրդային իշխանութան դեպի գյուղացին ունեցած հոգացողութունը, (ինչպես հայտարարեց մամուլում), թողեց քահանայութունը, վորպեսզի իրեն նվիրի իր սիրած գյուղացիներին լուսավորութան գործին:

Հրատարակելով նրա այս աշխատութունը, վորի մեջ դարձյալ պատկերացված են աղքատ գյուղացու կյանքը և գյուղական կուլակների արարքները, կարծում ենք հետաքրքիր և ուսանելի գիրք կարող ե լինել մեր գյուղական ընթերցողների և մեր գյուղին մոտիկ յանցյալի կյանքով հետաքրքրվողների համար:

Պետհրատի խմբ. կոլեգիա

ՉԱՏՈՅԻ ԲԱԽՏԻ ԱՆԻՎԸ

Ա.

1894 թվի խիստ ձմրան մի մուխն ու մպոսխուղն իրար խառնված գիշեր անընդհատ ձյուն եր գալիս մինչև առավոտ: Անդութ և անզգա սառնամանիքը, վոր վոչ մի բռնութունից յերես թեքել չգիտե, ամենքին ել անավորել եր, վոտքներն ու ձեռքները սարսափ ձգած, մանավանդ խեղճ, աղքատ, մերկ ու ջլբաց գեղջուկներին քշել տուն եր արել, և, անհագ ու կատաղի գազանի նման, այնտեղ՝ այն ծակուծուկ, խղճուկ ոգանների քյունջ ու պուճախումն ել չեր ուզում հանգիստ թողնել նրանց. այլ իր վիշապաշունչ բուք ու բորանի վոռնոցով ներս եր թափում իր բերանի կատաղի թուխը, սառեցնում, փետացնում եր բաց միսները, ու, նրանց տանջված վոսկորներից անգամ անցնելու սպառնալիքով, կարծես սև ոճի հման կծում, շանթում, մորմոտում, կծկում ու կուչ անում անվերջ:

Ճրագից սովորաբար միշտ դուրկ մեր գեղջուկ յեղբայրների ու մանավանդ վորը և այրի քույրերի խրճիթները կիսով չափ լուսավորողն ոջաղում վառվող, կամ ավելի ուղիղն ասած՝ առկայծվող կրակն եր:

Նրանք իրենց վորբանման յերեխաներին վազուց արգեն տեղաշորի տակն եյին ժողովել, վոտնածոց անել տվել, և՛, վերմակի փոխարեն սակայն, ունեցած չուլ ու փալասները վրաները թափել, այսինքն՝ մի կերպ տաքացրել, քնացրել եյին, իսկ իրենք կրակի, վորպես աստծու, գիրկն եյին ժողովել ու կարծես յերկրպագում եյին նրան: Բայց ի՛նչ ոգուտ, յերբ խեղճերն առաջները կրակին դեմ արած տաքացնելիս քամակներն եր ցրտատար լինում, իսկ քամակները կրակին դարձնելիս, առաջներն եր ցրտատար լինում: Ինչո՞ւ եյին շուռ ու մուռ գալիս և ջերմութեան աստծուն յերկրպագելիս:

Այդ դաժանելի կացութեան մեջ եյին անխաբ բոլոր չքավոր ու անճար և անոգնականները և շատ չնչին եր նրանց կացութեան պայմանների տարբերութեանը:

Նրանցից միքանիսը հազիվ թե ուտելու չոր ու ցամաք հաց ունեյին մինչև գարունը. մյուսներն ունեյին մի անսովա միայն. բայց կային այնպիսիներն անգամ, վորոնք վազուց արդեն վորբամութեամբ եյին պահպանում իրենց գոյութեանը. սակայն անողորմ ձմեռը, կարծես իր կատաղութեանից կուրացած, չեր տեսնում այդ ամենը, և, չար աստծու վրեժխնդրութեանից մոլեգնած՝ վոռնալով ամենուրեք տարածում եր իր սարսափելի շունչն ու հյուծում, հուսահատեցնում, մահվան դուռը հասցնում նրանց:

Որճիթների ծխնելույզներից ներս թափվող ձյունը հետզհետե սպառնում եր յեղած աղքատիկ կըրակներն ել հանգցնել. վոչ վոք չեր հավատում հաջորդ որվա պարզվելուն ու բացվելուն, լավ յեղանա-

կին, այնքան անողորմ կերպով շատանում եր վրա տվող ձյունը. ուստի մինը դուրս գնալով խրճիթից, ձյունի խորութեանը չափելով, մյուսը վերև նայելով, ասված եյին լինում գալիք թշվառութեանից:

— Ո՛ւհ, անտեր ըլի եսպես ձմեռը. չվել լուսը թամսմ մի գազ խորանալու ա ձինը:

— Վաճ. վա՛, մեր վոչխարների որին...

— Տերը մի՛ արասցե, յեթե մի շաբթվա չափ ել եսպես շարունակվի, ապրուստներս կատարյալ դժոխք կը դառնա:

— Հա՛, յեթե յերկարե՛, լծկաններս ձեռներիցս գնալու յեն, տուններս քանդելու ա, ել մի՛ ասիլ...

— Ո՛հ, աստված, յարար գիտես, վոր հաց չունենք, գիտես վոր եղուցվա համար ել՝ ուզելու, մուրալու հուսատեղ չի մնացել մեղանսում:

— Ա՛խ, քո տունդ քանգվի աստված, յանի ի՛նչ ենք արել քեզ, ի՛նչ մեզք ենք գործել, վոր սը՛ն չիլ ու չիփլախ, սը՛ն անոթի ու ծարավ ես թողել մեզ: Հարա ասում են թե դու վողորմած, ամեն բան տեսնում, լսում ես, հարա ասում են թե դու քու ստեղծածին մոռանում չես: Ա՛նթ թե ետպես ա, ել վո՛ր որվա համար ա ամենատեսութիւնդ. չես տեսնում, վոր հացի փոխարեն միսս են ուտում յեթիմները՞: Ականջներդ ի՛նչի ես փակել, խուլ հո չես. ինչո՞ւ չես լսում եսքան աղի արտասունքս, լաց ու պաղատանքս. սիրտդ ինչո՞ւ ես քարացրել աղքատների ու վորբերի համար. յեթե դո՛ւ ես ստեղծել, ինչո՞ւ ես ստեղծել. ինչո՞ւ ես ստեղծել ու տանջում, չարչարում մեզ, ա՛ չարչարվես դու ել մեզ պես...

Այս հուսահատութեանն ու յերկյոռըը, այս վը՛-

տալի հառաչանաց ձայները առաջ ելին յեկեղ նախընթաց տարվա ամբերրիությունից, անաշողություններից: Նրանք չեյին կարողացել այնքան պաշար ժողովել, վոր մինչև գարունը կամ մինչև նորի դուրս գալը բավականացներ թե՛ իրենց և՛ թե՛ ընտանի կենդանիներին. այսինքն՝ մի կողմից նրանց կանաչ արտերն ու արոտները կարկուտն եր տարել: մի կողմից մորեխն եր կերել ու կտրել և մյուս կողմից ել յերաշտը խաշել ու տոչորել: Ահա այս եր նրանցից շատերին դառն հոգս պատճառող դարդն ու վարամբ. և այս անաշող հանգամանքից ի՞նչ ասել կուզե, վոր ամենից առաջ և ամենից շատ հուսահատվում, արտասվում եյին այն անձար աղքատները, վորոնք առանց այն ել մինչև վզները պարտքերի մեջ թաղված և խրված եյին, իսկ այրիների ու վորբերի հուշը հո՛, միանգամայն խորտակվում եր արդեն:

Աղքատներից ու չքավորներից մինը՝ յոթ տարեկան հասակից վորբության և կյանքի կամ տանջանքի դառն բախակն աղաների ու խանութների գրուներին ճաշակած Չատոն, այնքան խոտ ու դարման ունեք իր չոթալում, վոր ամբողջ ձմեռն անպայման բավական եր իր մի հատ յեզանը—յեղբորը կամ ընկերին. սակայն, պատրաստի են խոտն ու դարմանն ել վոր չունենար նա, ելի կարող եր պահպանել իր յեղբայր Խնձորին, վորի համար նա միշտ ասում եր. «Յես յեղբայր չունեմ, իմ յեղբայրն իմ յեզն ա. խոտ ու դարման ել վոր չունենամ, ձեռներիս փչելով կը գնամ լանջերն ու ցաքուտնին կընկնեմ, գետինը մատներովս ել կը փորեմ ու որական մի շտրակ տակուի կը հանեմ, կը բերեմ ու կը կշտացնեմ նրան»:

Այն, այդպես կտներ Չատոն, միայն թե այդ լիներ նրան անհանգստացնող և ծանր մտահոգություն պատճառող հոգսը: Չատոն, մի յեզնից ավելի վոչինչ չունեք. այն եր նրա միակ և ամբողջ հարստությունը՝ պարաքի հետ միասին, այն եր նրա թե՛ գործարանը, թե՛ մշակը, թե՛ խանութն ու վաճառատունը և թե՛ վոսկին ու արծաթը, ակն ու մարզաբիտը:

Իայց բանն այն եր, վոր Չատոն իր դժբախտության մեջ այս անգամ մի յեզնով ել բավական բախտավոր եր համարում իրեն, վորովհետև մի տարուց առաջ այդ մի յեզն ել չունեք, այլ իր նորատի կնոջ հետ միասին մի տնաքանդ աղայի դրան համարյա մի փորի հացի «նոքար» եր, իսկ թե՛ այս, մարդու պատիվն ստորացնող «նոքար»-ության կամ ստրկացնող ծառայության մեջ ի՞նչ անտանելի չարչարանքների և անպատվությունների եյին յենթարկվում յերկուսով, այդ լավ կը հասկանան կյանքի այն չարքաշ զավակները, վորոնց հասարակ անունն ե՛ ծառա, աղախին, բանվոր, մշակ և ստրուկ ու հպատակ: Իսկ սրանցից ավելի նրանք, վորոնք դատապարտված են յեզել ծառայելու՝ ժլատին, անգութին, ազահին, վաշխառուին, վայրենաբարո տգետին, անհողի հարստին, ոտարին և անիրավին կամ գազանին:

Չատոյի ու իր կին Նարզղի ստրկական ծառայական-պարտավորությունները կամ տանջանքները հետևյալներն եյին: Նարզղիը պարտավոր եր աղայի ամբողջ ընտանիքի համար, համարյա ամենայն որ, թե՛ քերքը վեր քաշած, խմոր հոռեցել, և, թո՛նրի պավովն այրվելով, խանձվելով ու խորովվելով՝ մի քանի տաշտ հաց թխել, իմելու, լվացվելու, լողացնելու, մին-

չև անգամ հոտից, նախրից ու յերամակից յետ մնացած,—կամ կաղ, կամ հիվանդ և կամ նորածին գառների, վոչխարների, հորթերի ու գոճիների համար, յերկու-յերեք փթանոց կժով որական քսանից յերեսուն կուժ շուր կրել ուսով, և այն ել՝ բորբիկ վտտով: Պարտավոր եր սրբելու տունն ու դուռը (բակը) և աղբն ել շալակով տանելու դեն անելու: Այս վերջացնելուն պես, առանց մի բույն հանգստանալու, պետք է նստեր կամ աղ, կամ ձավար ու տաք դեղ աղար, և՛ կամ աղունն ու սերմացուն խախալեր, վեր կենար վառեր կրակը և կերակուր յեփելուց բացի, հանդից սուն վերադարձող շների համար ել լակ պատրաստեր, նորը կարեր, հինը՝ լիներ այն շապիկ, արխալուխ, չուխա, շալվար, խուրջին, սոսորակ, կարպետ, ջեջիմ թե չուալ, միկնուլայն եր, մասները մաշելով ու ասղահար անելով, պիտի կարկատեր: Նա պետք է բուրդը լվանար, քրքրեր, զգեր, մաներ և թոկ ու սամոտեն, պարան ու ճուպան հյուսեր, տափագործ կամ հորագործ շալ գործեր, մաքրեր յերեխանցը և լվանար, վնչ միայն նրանց հագնելիքը, այլև տակների քեչան, խալիչին ու կարպետը: Յերեկոյան, քնելիս ես, նս պետք է հաներ ամենի վտանամանները, աղայի ու խանուժի թեքը քաշեր, ցերեկով ել գլուխները քրթվեր: Նա պետք է շուր տաքացներ թե մեծերի և թե փոքր աղաների ու խանուժների գլուխն ու վտաքերը լվանար, լվանալուց վերջն ել, վորպես թե իբրև քրիստոսավանդ սովորություն, աջու վտաքներիցն ել խոնարհաբար համբուրեր, մեջքները քորեր. մի խոսքով, ամենի պահանջն ել կատարեր,—ընթրիք տար նրանց, սփոսցը հավաքեր, ամանները լվանար, թարեքեր և

ապա ձեռները նույնպես խոնարհաբար սրտին դրած՝ ամենից յետ՝ շեմքի մոտ ցրտունի արձանաբար, մինչև վոր մեծ ու փոքր ամենքն ել բարեհաճելին քնել և ապա թե ինքն ևս համարձակվեր քնել ամենից ուշ, միայն այն պայմանով, վոր առավոտն ել արթնանար ամենից շուտ. և, թացը չորացրած, չորացրած շորերի կամ գուլպաների փոշին թափ ավամ հագնելիքները հագնելու մատուցաներ. և դարձյալ, ումն ինչ պետք լիներ, և կամ ով ինչ պահանջեր, անպաճառ միմիայն նս պետք է տեղն իմանար և իսկույն, առանց ուշացնելու, հաներ իրենց տար: Իսկ սխալված կամ մոռացած զեպուժ թքվեր, նախատվեր, անարգվեր, անլուր կերպով հայհոյվեր ու վայրենուն հատուկ դադանակով և կամ աքացով անողորմաբար ձեծվեր: Յե՛վ այսքանը դեռ ձմեռվա պարտականություններն էյին: Գարնանը դրանց հետ միասին նա պետք է գնար աղայի մարգերը, արտերն ու ագարակը քաղհան աներ, չութվորին հաց ու կերակուր տաներ, հանդից վերադառնալիս ել թթվասեր խանուժի համար թթուի բոխ, սիրելի, վողորմակութ, ճոնջուլ, շուշան, յեփելու համար սինտրիկ, ձնեփակ, բանջար, գիմբել, փիփերթ, դանձիլ և ուրիշ շատ տեսակ աղցաններ քաղի բերեր, յեփեր ու աղային տաք-տաք կուշտ ուտացներ:

Սակայն ձմեռն ու գարունն ավելի փառք էյին Նարգզի համար. բանն ու գործը կամ ստրկական տանջանքները, կոռ ու բեզիառի ծանրությամբ, ավելի ևս շատանում էյին ամառն ու աշնանը, յերբ կալն ու կուտն իրար էյին խառնվում», յերբ սկսում էյին ցանածն ու հնձածը հավաքել, կալ գցել, կալսել, քամել, խախալել, կրել ու տեղավորել կամ հորերում և կամ ամբարներում ու քթոցներում:

Նարգզի լծակից Չատոն ել պետք է վարեր, ցաներ, ջրեր, հասցներ ու հնձեր, կրեր, կալսեր, հորեր, աղեր, փուռ հատեր այգին չափարելու, և գիշերն ել տանն ու տեղին կամ աղայի ամբողջ հարստությանը պահապան կանգներ ու ամենափոքր բանի համար ել պատասխանատու լիներ՝ վոտով գլխով, ու կաշվով: Այդ բոլորից դուրս, նա մեծ մասամբ մասնակից եր նաև Նարգզի պարտականություններին ու անպատվություններին, վոր տալիս էյին վերոհիշյալ տեսակ-տեսակ աղաներն ու խանութներն՝ վորպես ծառաների համարյա ձրի մշակների հոգեհաններ:

Չատոն իր վորբուցյան դառն որերում այդպիսիներից յուրաքանչյուրի ճանկն ել ընկել եր, համարյա ամենի ձեռի թթուն ել խմել եր ու շորվան խփշտել:—Մի սխալ արած, մի ծուռը բան բռնած ժամանակ, վորքան հանդիմանություն, վորքան նախատինք, վորքան թուք ու մուր ասես, վոր խեղճ վորբը չեր ստացել: Որինակ՝ մեկը բանացրել, ամբողջ ուրբ տանջել, չարչարել եր նրան ու քաղցած թողել, մյուսը վարձը կտրել, ծեծել ու վռնդել տանից կամ կալվածքից, յերրորդն ոգուտ քաղելով նրա նեղ զրությունից՝ վարձել և կիրակի որերով ել բանացրել եր նրան, չորբորդը սիրտ առնելով նրա անտերությունից ու անզորությունից, տարվա վերջը, կամ պայմանի ժամանակը լրանալիս, մի սուտ գողություն եր հնարել վզին դրել և տունդանքի փոխարեն տարեկան ոտճիկը բռնել, ծեծել նույնպես ու բանտարկել տվել. և վերջապես, վերջինն ել ամբողջ վեց տարի ծառայեցնելուց հետո, իբրև թե լավություն, բարություն եր արել—պլասակել եր տվել նրանց և կես տարվա ոտճիկը հարսա-

նիքի ծախս գրել ու դեռ մի բան ել վրան պարտք գրել թե՛ «կամ մի տեղից պետք է ձարես տաս, կամ վեց ամիս ելի կնոջդ հետ ինձ ծառայես»:

Անա այս եր պաճառը, վոր խեղճ Չատոն ամեն որ և ամեն ժամ, թե՛ ձորում, թե՛ դաշտում և՛ թե՛ լեռան լանջում ձեռքերը դեպի յերկինք տարածած՝ ասածուն՝ ողնության կանչելով իրեն, աղաչում, պաղատում և խնդրում, եր ասելով—

—Մխ, աստոծ ջան, յանի ի՜նչ կը լինի, վոր մի անգամ ել ինձ աջողություն տաս, ի՜նչ կը լինի, վոր մի անգամ մի մշանով (ղիպվածով) ել իմ ձեռքը մի քանի կոպեկ գցես, վոր կեսն իմը, կեսն ել մեկից պարտք անեմ, մի յեզն առնեմ ու արևիս ձեռն ամելով, ուրախ սրտով պոչը բռնած՝ մի՛, քչեմ, տանեմ վարս ու ցանքս իմ հոր, պապական հողումն անեմ ու ես անհոգի, ես անողորմ ջնուղներին նոքարություն անելուց ազատվեմ... Մխ, յարար աչքս բաց ուզածիս կը հասնեմ, ա՛յ անվողորմած աստված:

Սակայն, Չատոն ուրիշ հնար չուներ յերեք կամ չորս թուման փող ձեռք բերելու. նա յերկար մտածելով, վորսորդության մի միտք հղացավ. աշունքվանից սկսած մինչև գարնան բացվելը անտառում փայտի ձողերից հնարած թակարդներ լարեց, վոր գոնե մի քանի դալա (վայրի կատու) կամ աղվես կալնի ու նրանց մորթու վաճառումից գոյացած արդյունքով մի աչառ կամ մի յեզն գնի: Բայց բանն սյն եր, վոր խորամանկ աղվեսներն ել միշտ մոտենալով թակարդներին, զգուշությամբ վերցնում էյին Չատոյի շարած հացի կամ մսի պատառները և հեռանում: Այս անհաջողության պատճառով Չատոն խիստ հուսահատվում եր:

Յերբ գնում եր թակարդները գատարկ գտնում, ամբողջապես լքանում ու տեղն ու տեղը փշրվում եր թե հոգեպես և թե մարմնապես:

— Ե՛, սև՛ լինի սրա պես քոռ բախտը, վոր ինձ համար անտակ ծոֆն ա ընկել ու ամենևին դուս չի գալիս,—գլխին պտտելով ասում եր ինքն իրան և աղամա պատանները նորից շարելով թակարդների արանքներում, կոտրված սրտով վերագոռնում եր տուն, ուր նրա խեղճ կինը նույնպես անհամբեր սպասում եր իրենց բախտին անտառի խորքից՝ վորսերի աշխարհում:

— Ե՛ լի թալակդ բան չեր ընկե՛ր,—միշտ հուսահատ հարցնում եր կինը:

— Ո՛ւր ա, թե ընկել ա. աղքատին աստոծ արքայություն չերբ ա տվել, վոր հիմի տա,—գառնությամբ պատասխանում եր Չատոն:

— Չարար չունի, ելի հավատդ կորցնիլ մի, համբերությունը կյանք ա. մի անգամ կը տա ու շատ լավ կը տա,—իրեն հուսահատությունը թագցնելով, մարդու, ամպամած հոնքերին ու տրտմած դեմքին նայելով, հուսադրում եր չարատանջ Նարգիզ հարսը, վոր փափագում եր ազատվել նազ ու քյուզով ապրող խանումներին ծառայելուց և ամեն ըրպես նրանց թուք ու մուրը տանելուց:

Չատոն գիշեր ցերեկ մի գույգ յեզան մասին եր մտածում: Մի առավոտ նա վաղ արթնանալով, կնոջը հայտնեց, վոր գիշերն յերազում դալաներ եր կալիւր Հուսատու յերազից յերկուսի հոնքամեջն ել բացվել եր: Ել սուրբ Կարապետ, ել Սրվել, ել սուրբ Գրիգոր ու սուրբ Սարգիս չմնաց, բոլորին ել մատաղ, ճրագ խոստացան նրանք, յեթե յերազն ի բարին կատարվեր:

Արդարև, յերևի բնությունը՝ յերկինքն ու յերկիրը—հողն ու ջուրը, սարն ու անտառը վերջապես խղճացել եյին դառն ու տանջված աղքատներին: Հավատը զորացած Չատոն այն որը մի առանձին ուրախության ու տրամադրության մեջ եր. ուչք ու միտքը շարունակ թռչում եյին դեպի լեռն ու անտառն, ուր սարված կամ լարված եյին նրա այնքան անողորմ թակարդները:

— Չե, Նարգիզ, սիրտս ասում ա վոր, յերազս կատարվելու ա,—մի կողից ձեռքի բանն ու գործն եր անում, մյուս կողմից իր բախտի վրա մտածում:

Չատոն շտապեց գործերն ավարտել, ապա մի քանի ժամով անտառը բարձրանալու իրավունք ստանա ազայից: Ազան զիջեց, իրավունք տվավ թե չե, Չատոն հրեղեն դարձած գյուղից դուրս թռավ, մոտակա բլրակի գլխին յերեսն աղոթարանին դարձրեց և հուսադրված խաչակնքեց. «այ արեգակ, դո՛ւ իմ բանն աջողաս, դո՛ւ իմ կապված բախտը բաց անես...»,—ասաց ու նորից քայլերն արագացնելով, սլացավ դեպի անտառի խորքը: Յեվ, յերբ թակարդներին հասավ ու տեսավ, վոր տրաքվել են և մեկի փոխարեն յերկ-յերկու դալայի գլուխ արանքներում ջախջախել, ել չիմացավ, թե ի՞նչպես բավականություն տա իր անհագ սրտին: Նա իր բախտավորությունը դալաների դժբախտության մեջ վորոնած, խիստ ազահությամբ հանդիպեց նրանց:

— Ոխմյ, դարգահիդ (դարավոր գահիդ) մատաղ, անտաված ջան, հիմի վոր դժոխքից ազատվեցի, հիմի վոր ծոված մեջքս ու տըտուզս դրստեցի, հիմի վոր յեզներս առա՛,—մեծ գոհանակությամբ ցնծալով նա, շտապեց դալաները մեկ մեկ հանել թակարդների արանքից:

Չատոն մի ժամից հետո՝ արդեն դալաները մաշկել եր և մորթիներն ուսը ձգած, հյուսնուտ թալից տուն եր գալիս: Թե վորքան եր նրա ուրախութեան չափը և ինչքան նրա սրտի բերկրանքն ու բավականութունը, չեմ կարող խսկութեամբ վորոշել, միայն այսօր քան ասեմ, վոր նա, այն տրորված, նվազած, լքացած ու տխուր, սրտում, հուսահատ և սորկացած Չատոն, միանգամայն զվարթացել, աշխույժ, սիրտ ու հոգի եր ստացել—քայլում եր համարձակ և աներկյուղ, չնայելով այնքան ցրտին և վտոների տակը արաք-արաքվող, ճոճութող մահաշունչ ձյունին, չնայելով իր բարակ ու պատուտուն՝ ձորձ հագուստին, դըլխարին ել վերցրել եր կռան տակն առել, ու, խիտ բարձր և ղիլ ձայնով «բայաթին ու խայաթին» իրար խառնած՝ յերգելով—կլկլացնելով ու յելեկններով իր ձայնը հնչեցնելով և իր բախտի փշրանքներն ուսած, հետզհետե իջնում եր բարձրից:

Այնքան դառն էյին յեղել նրա, մեր գեղջուկ յեղբոր որն ու արևը ծառայութեան, սորկութեան և տանջանքի աշխարհում, վոր բախտի ու հաջողութեան այնպիսի մի թեթև շարժումն անգամ, ձմեռվա այն մահաշունչ որերն ու ժամերը նրա համար կարծես թե գարու էյին դարձրել:

Յերգի, բայաթու և խաղի մինը վերջացնելով և մյուսն սկսելով, նա գալիս եր գալիս, ապա կանգ առնելով ճանապարհին և մորթիներն ուսից իջեցնելով, նորից անհագ հրճվանքով ու անմեղ հպարտութեամբ

լցված, նայում եր նորից, ձեռքի ափը մաղներին քրտում, ժպտում, և, և՛ս ավելի յեռանդով յերբորդ, չորբորդ յերգերն սկսում ու վոգեւորվում:

Գյուղին մոտենալիս կինը լսել ու ձանաչել եր ամուսնու ձայնը և ողայի սրահիկը դուրս յեկած, սառող ձեռքերին փչելով, աչքը կարոտով հանդերին, լանջերին ձգած՝ փնտոում եր նրան և խնդալով շշնջում.—

— Փառքիդ ու մենձութենիդ մատաղ, աստո՞ծ ջան, խեղճ մարդս խաղ կանչելով ա գալիս, հալբաթ գալից, աղվեսից բանից կալել ա...

Չատոն, վերջապես, ձայնը դադարեցնելով և լանջնուվայր դիմաց դուրս գալով և կնոջը նկատելով, կանգ առավ: Հղի և ծանրացած կինը նրա ուսի մորթիները յերբ նկատեց, ուրախութեանից թեթևանալով կարծես, արշավեց դեպի նա ագահութեամբ, ուզում եր գրկել ու համբուրել նրան: Չատոն շտապեց իր հաջողութեանն ավետել կնոջը: Գեղջուկին հափշտակութեամբ սկսեց շոշափել, շոյել մորթիներն ու հիացմունքով ուրախուրախ բացականչել.

— Վայ քե, ի՞նչ սիրուն-սիրուն մորթինք են է: Ես վճր ոխնված սարիցն ու բարոտ քոլիցն ես կալել, ես վճր աստո՞ծն ա բանդ աջողել...

— Ե՛հեյ, ել խոսալ մի, վոր աստո՞ծ ետր համ քեփս ա քոքացրել, համ ձնս ա բացել, համ ել շատ զուլում դալեք են դալեքս. յերկինք, գետինք վկա, չարգիդ ջան, ամեն մինը տասը կարմիր թուման փող արժի,—պատասխանեց Չատոն և մորթիները ծանր իջեցնելով ուսից, չորան ի միասին սյունի ձակատից կախ ավեց խնամքով: Այնուհետև ել յերկուսով էյին խելափորույս կերպով նայում մորթիներին, իրենց բախտ ու

1001
2529

փառքին և կարծես թե չեյին կշտանում նայելուց ու շոյելուց:

— Ասեցիր վորտեղից ես կալել, — կրկին և կրկին հարցնում եր հիացած գեղջկուհին:

— Լղոցը գիտե՞ս:

— Վի՛հ. Լղոցը՞:

— Հարձ:

— Վե՛յ... քու ճարը շատ ըլի, սյ մարդ. — բացականչեց նա և մի առ ժամանակ, ահավորված կարծես, սկսեց մարդու յերեսին պել պել նայել:

— Հը՞, քարճիկդ հու հավի քարճիկ չդառավ:

— Տնաշին վե՛նց չդառնա, մեյար դու գլխիցդ ձեռն եյիր վերկալել, վոր մեն-մենակ ու անյարաղ, են արնկեր գող ու գաղանի ձորերն ու բներն (վորջերն) եյիր մտնո՞ւմ:

— Հը՛. հաբա ի՞նչպես եյիր իմանում մարդուդ. հենց իմանում եյիր թե լըպատարակի աքացուց վախեցող Կակինի տղեն լե՞մ: Յես տղամարդ եմ, տղամարդ. ինձանում վոչ յերկյուղ կա, վոչ ահ: Յես, այ սուհետե Լիսամի բունը (վորջը) մտնելուց ել չեմ վախենալու, ուր մնաց թե Լղոցի ձորը, — պարծանքով ու ինքնագովությամբ լցված՝ կնոջ առաջ իր հեղինակությունն ավելի բարձրացնելու համար, մատնացույց եր լինում նրան անտառի ամենահեռավոր ու վտանգավոր, մինչև անգամ ամենաանմատչելի ժայռուտներին և գազանաշատ լոճներին ու անդունդներին, վորպիսիք Լղոցի անտառներն ու ձորերն եյին:

— Յերբվոր թալակների դիմացը դուրս յեկա ու տեսա, վոր մեջները վորս կա, ենպես ուբախացա, են-

պես ուբախացա, ենպես վրաթռա, վոր ահն ել մտիցս ընկավ, մահն ել: Ես ասածու որխնած անասունին ել քոռի պես ջուխտ-ջուխտ եյին թալակների մեջը թափվել ու գլուխները փետերի արանքներումը ճճխել...

— Ոխվա՛... Ասածու փառքին մատաղ ըլնեմ յես, բաս հու բախտներս միշտ կապված չեր մնալու, — գոհությամբ ավելացրեց կինը և նորից սկսեց շոյել մորթիները և յերեսը քսել:

Այսպես, Չատոն վերջապես հասավ իր փափագին: Նա վաղուց եր վճռել, վոր յեթե կարողանա բոնե մի յեզը գնելու գումար գտնել, իսկույն թողնելու և ուրիշի համար աշխատելն ու չարչարվելը. ուստի շտապեց մորթիներին աղ ու շիբ անել: Դրանից հետո, մի կիրակի որ իր բախտը չալակած բազար տանելով, չորս հատը քսան և ութ ուրբիով վաճառեց, վորից յերկու ուրբի ծախսելով կնոջ համար մի դերիացու. և մի գլխին գցելու թաշկինակ գնելով, 26 ուրբով վերադարձավ տուն, մի շաբթից հետո աղայի, հետ հաշիվը վերջացնելով, հրաժեշտ տվավ իր ստըրկությանը. ապա կնոջ հետ միասին ճանապարհ ընկան դեպի իր պապական ողան, վորն յերկար ժամանակ անտեր և անմարդաբնակ մնալով, ավերակվել տեղ-տեղ հողը թափվել, փարդիները փթել, բաց եր յեղել տանիքը և չղջիկներով ու գորտերով լցվել, իսկ շեմքում արդեն խոտ ու բանջար եր բուսել:

Չատոն ոտարությունից հին բունը վերադարձած ծիծեռնակի պես, ողան կարկատելուց ու մաքրելուց հետո, շտապեց յերեսուն ուրբի պարտք անել մի վաշխառվից և, սղքատակեր սովոսը վրան գալով, մի տարեն ժամանակի 48 ուրբու բարաթ տալ

նրան, հույս ունենալով, վոր կրկին լարած թակարդներով մինչև գարնան բացվելը մի քանի դալա եւ կալնելով, կարող ե պարտքը լրացնել և ժամանակին առանց գավի-դառաբայի հատուցանել: Չատոն արդեն 56 աուբլի փող ունեւր: Նա այդ գումարով մի լուծ յեղը գնեց և ամբողջ ձմեռը իր հարազատ յեղբայրների պես պահպանեց մինչև գարունը:

Իսկ այս գարունը մի չտեսնված և շատ անուշ գարուն եր նրա համար. բոլորովին նման չեր այն գարուններին, վորոնք անցել էյին անքան դառնություն պատճառելով նրա սրտին: Այս գարունը ճընշված Չատոյին համարձակություն և ստրկացրած, զրկված զիշատված, և վտանակոխ յեղած Չատոյին՝ ազատություն, կարողություն ու անգնահատելի սեփականություն, մի լուծ կյանք, մի լուծ յեզն, կամ յերկու հարազատ յեղբայր եր տվել, և բացի դրանից, Նարգիզն ել, հենց այդ միջոցին մի արու գավակ եր ծնել: Գյուղը, հանդն ու արտը, սարն ու քուլը այս գարնանը նրան ավելի անուշ, ավելի և մինչև անգամ անչափ, անսահման սիրելի էյին թվում, քան յերբ և իցե իր ամբողջ կյանքի հազվադեպ ուրախ վայրկյաններից մեկում:

Աննկարագրելի եր մանավանդ այն ըոպեյին, յերբ Չատոն արորն ու սերմնացուն պատրաստած, խինդն յերեսին, ժպիտը շրթուքներին և իր սիրելի յեղբայր յեզների ականջը բռնած լծան տակն եր քաշում, իսկ կինն ամբողջպես ուրախություն դարձած՝ կարմիր ու սպիտակ թելերից հյուսած սամոտեններով եր շնորհավորում մարդուն, և, մոտենալով լրծվող յեզներին, անվերջ համբուրներ եր գրոշմում նը-

րանց յերեսին, դնչին ու ծնոտներին, և անմեղ հավատով դառնալով յերկնքին, պաղատում եր ասածուն. «տեր, վերնեյին աստված, դու զսմաթ անես մեզ, դու կապները պինդ անես, դու աջողաս մեր բանն այսուհետև, մեզք ենք, խեղճ ու նաչար ենք...»:

Յեզները լծելուց և արորը լծնովը ձգելուց հետո, Չատոն նույնպես, ազոթարանին դառնալով, կըրկնեց կնոջ խնդրվածքն ու յեզները քշեց, իսկ կինը յերեսնան զիրկն առնելով, հետևեց նրան դեպի իրենց սեփական և պապական վարելահողը, վորի չորս կողմերում արդեն ծրել ու վարում էյին նրա բախտավոր համադյուղացիները:

— Բարի լուս, բարի աջողում ձեզ.— Չատոն աջ ու ձախ վողջույն տալով ամենին, կարծես ուզում եր նրանց ուշադրությունն իր չնաշխարհիկ լծկանների վրա դարձնելով, նրանց իրեն և իրան ել նրանց ուրախակից դարձնել:

— Բարի լուս, բարի աջողում ձեզ, այ հարեաններ.— կրկնում եր Չատոն բարձր ձայնով:

— Ասծու բարին, այ խաչատուր, կապները պինդ ըլի, աստված քեզ զսմաթ անի, վոնց վոր քու սիրտը կուզի:

— Վարըզ շատ ըլի, այ խաչատուր. խեղճ ես, յեթիմություն շատ ես քաշել, թող հիմի աստված տա, վոր յեթե չոր քարի վրա ել սերմը գցես, կնանչի ու մեկին հազար ծաղկի ու պտղի:

— Աստված սիրտդ ավելի ուրախացնի, բանդ ավելի աջողա, այ խաչատուր, վերջապես հասար մուրազիդ. շատ լալն են յեզներդ, դնչաղ կաց, այսուհետև

հենց մի գլուխ քշիր ու վարիր, ել վախես վնչ, ով աշխատի, աստված ել նրան կտա, չի կորցնիլ...

Այս մտերմական, անմեղ ու անկեղծ բարեմազ-թուփյուններով անչափ ու անսահման կերպով քաջա-լերվում եր Չատոն, շնորհակալություն հայտնում և «ընտիրարաբար» հազարով, առաջ քշում յեզները, վո-րոնցով կարծես թե միանգամայն և բոլորովին մոռա-նում եր իր այնքան տարվա դաժանելի ծառայություն-ները. կարծես թե այլևս ել վնչ դարդ ունեք և վնչ ել ունեցել եր յերբեք: Մի խոսքով, այսորվա նրա տրա-մադրությունն անվիճելի կերպով գերազանցում եր անյն որվան և ժամերին, անյն սևասրտած ու ամպա-մած տրամադրության, վոր մոտ անցյալում, աչգին-քըն՝ նույնպիսի գարնան որերում փուշ ու տատակով եյին լցնում նրա տանջվող սիրտն ու հոգին, յերբ ինքը գուրկ, բայց աղայի յեզներով, աղայի արորն ու սերմը նրա կուպիտ և անլուր հայհոյանքներով լի հրամանի ճնշողության տակ եր հանգը դուրս տա-նում, վոր—նրա համար աշխատի, նրա համար տանջվի ու չարչարվի, առավոտից մինչև յերեկո, մինչև մութը նրա համար ջարդվի ու փշրվի անվերջ և անվարձ հա-մարյա:

Չատոն վերջապես իր խամացած ու խուլանա-ցած վարելահողը հասնելով, «հո՛ո» արավ, լծկանը կանգ-նեցրեց, արորը սարքեց, ճղմակը տեղը ձգեց, չոքեց, հոգի մեջ, մի բուռը հող վեր առավ յերեսը քսեց, պա-ղատալից աչքերով նայեց դեպի յերկինք, աղոթք մրմնջաց և մաճը բռնելով, «Ձա՛ր, որխնյալ ա ասոճ» գոչեց ու հողի յերկայնությամբը ծրել ու վարել սկը-սեց:

Աննման և սքանչելի եյին գարնան խորհրդավոր և կենսատու տեսարաններն այն անմեղ վայրերում, ուր ամեն մի յերևույթ կարծես յերկնային շունչ, յերկնային անմահություն ու մեծությունն եր իր մեջ բովանդակում: Յերկինքը հստակ, ինչպես հայե-լի, անտառը զուգված, վորպես փեսա, դաշտերը նո-րահարս, հոտաղները, հովիվները, առուներն ու թըռ-չուններն ել իրրե մի մեծ հարսանիքի փողհարներ—բնական և աննկարագրելի ու քաղցր ներդաշնակու-թյամբ ձայնակցած իրար, սար, ձոր, բլուր ու հովիտ և լյառն ու այր մի մի նվաչարան դարձրած՝ յեր-գում ու վառում եյին իրար և դյութում, կախարհում մարդու հոգին ու միտքը:

Արեւ հեռվում դեպի յերկինք ցցված բարձրունք-ների վրա դեռ ելի ամբարված ձյունները փայլեցնելով ու հետզհետե վողջունելով նորականաչ անտառներին և լանջերին, ապա իր վոսկեվառ ճառագայթները սրփ-ռելով դաշտ ու հովիտների, առավանների ու լճակների վրա և իր անհամար ճաճանչները փշրելով նրանց մեջ, հազար ու մի գույնի միլիոնավոր բյուրեղներ եր ձևացրել ամենուրեք, մանավանդ ցողաշատ դաշ-տերում, ուր կարծես թե մարգարտի փոշիներ լինեյին ցանված: Առավանները դուրս գալով իրենց մայր ավա-զան կույս անտառներից, խորհրդավոր մրմունջներով սահնելով դեպի վայր, սիրո քաղցր գուրգուրանքով գգվելով իրենց սահանքներին, միախառնվում եյին ի-րար և վտակ առ վտակ—մի տեղ հանգաճ ու խա-

դանդ, մյուսում հորդորվելով ու խազս յեղնելով, յերբորդում գլգլալով, չորրորդում ոճաճև պտույտներով, վոր մուր, և վերջապես ապառաժներին հասնելով՝ նախ վշշալով և ապա շառաչելով ու փրփրալով վազում էյին առաջ, ու, վորքան հեռանում ու ցածրանում և ցըրվում էյին տափարակներում ու մարգագետիններում, այնքան ավելի էյին խաղում, շողշողում ու փայլփայլում արեգակի անվերջ ու անհամար բյուրեղների հետ:

Բայց, հարություն առած բնության այս ծոցում միթե կարելի չէ միմիայն մի հրաշալիքով գրավվել ու կախարդվել: Այնտեղ ամեն մի շունչ հանկարծ քեզ իբ կողմն է քաշում, ուշք ու միտքդ տանում և դու գմայլվում ես ու աչքդ անդադար ուզում ես մի տեղից դեպի մյուսը թոցնել և ականջդ այս ու այն կողմք դարձնել: Տավարների բառանչյունը, հովիվների սրնգի ու պրկվի անուշ մեղեդիները, մեղունների բզզոցը, արատւյտի գեղգեղումն, խոտերի, թփերի, միջով շներէ առաջ ահաբեկ վոստյուններով փախչող նապաստակները, ժայռերի վրա կաքաղիների անմեղ կղկղոցն ու կըչկոցները, թփից թուփ, լանջից լանջ, աջ ու ձախ՝ թևները պտպտուրիկ, յերգներն ու ծլվլոցները քաղցրիկ, կտուցները սիրուն թռչունների պտույտները, կտունկների բարձր բարձր շարանները, դարնան բացումն ու բուրումն արագ-արագ հայտարարող հոպոպների «հոպոպները», գառների և ուլերի մայունն ու մկկոցը, պատանի հովիվների անմեղ խաղերն ու վազելը և վերջապես վարուցանքս անող աշխատավորների պարզ խոսակցությունները անհուն բերկրանք ու ցնծություն էյին պատճառում մանավանդ բնու-

թյանը կարոտած ժարդուն և կարծել տալիս, թե հենց այն է զբախտ կոչված այգեստանն ու բուրաստանը, վոր յերևակայում են հավատավորները:

— Որխնյալ և աստոծ, քշիր, վրան քշիր... Չարը խափան, բարին առաջ, յետ արի:

— Բաշեցեք, արևներիդ զուրբան. յեզներ ջան, քաշեցեք. հն. հն... հն, հն...—պաղատանքով քշում էյին հոտաղները:

— Բշիր, ծոխլ մի. տղան, քշիր, դյուզ (ուլիդ) քշիր...

— Հն, հն..., տղան, խարակ մի անիլ, քշիր...

— Հո՛հո... Հո՛շ, հո՛շ: Ադան, սե յեզանն ի՛շ արա:

— Կոտրեցիք, խոփն ու ձևիչը կոտրեցիք, հո՛հո, ի՛շ ի՛շ սե յեզը քշիր...

Ադա, տո վիզներիդ կոտրվի, ի՛շ արեք, ե.—դայրանում եր մաճկալը և կախ ընկնում մաճից:

— Ի՛շ, ի՛շ, վո՛հո...—շտապով կանգնեցնում էյին հոտաղները, վոր հոշից զուրս ձգի:

Յեվ, յերբ «հոշից» (արգելքից) գութանի խոփն ազատում էյին, մաճկալը նորից վրա յեր հարում մաճին ու կրկին անվտանգ փափուկ հողի մեջ խրում խոփը. ապա՝ հանկարծ նշան տալով ամենին, մենմենակ բարձրացնում եր իր հեղինակավոր, առաջնորդող և ահարկու ձայնը, վորպես խմբապետ և յերգում ու կանչում.

— Չարն անցավ, որխնյալ և աստոծ, հոհո՛, հո՛, հո՛... և սրան իսկույն հետևում եր. «Վարեճճ կաճաճ-չի, հոհո՛, հո՛, վարեճճ, կաճաճչի, հո՛, հո՛,—ամբողջ հոտաղների համերգը, վորով արդեն սկսում էյին ևս ավելի դյուլթել ու դմայլել լսողին:

Չատոն ևս յետ չեր մնում իր հարեաններէց. նա ել եր հատ հատ յերգում և իր արյուն քրտինքով ձեռք բերած սիրելի Աբուաշ ու Խնձոր յեղների ուսին և արեհն դուրբան լինում. նա ել եր փափագում, վոր վարածն ու ցանածը ծլի, կանաչի, կարկտից, տոթից, մկներից ու մորեխից ազատ կանանչի, միայն նրա վարը—արորը մի լծանի եր, հորիքչիներ չունեք, վոր հետները խմբով յերգեր, կինն եր նրա միակ ձայնակիցը. այն ել գյուղական կյանքումն ընդունված բան չեր, վոր քթկալն իջեցներ, բերանը բաց աներ և համարձակվեր բարձր ձայնով կամ խոսեր և կամ յերգեր. այդ վորպես թե խիստ ամոթ եր...

Մխիթարականը, սակայն, այն եր, վոր, ինչպես գուշգ յեղներն, այնպես ել յերկու ընկերները—մարդ ու կին, կարծես նույնպես իրար հետ լծված՝ ամեն որ դաշտ գուրս յեկած, աշխատում էյին ու ոգնում իրար:—Կինն ուղղություն տալով ծրերին ու յեղներին, «յետեիցս յեկեք, աղպերտինք ջան» խնդրելով յերեխան գրկեմը, ծիծը բերանին, գնում եր առաջներէց, իսկ ամուսինը խփել—չղմշելով նրանց, ճիպտաբ պատելով և աղաչելով ու փաղաքշելով, նույնպես, քշում եր յետևներից:

Յեղները գեր, կինն ոգնական, նորածին և այն ել արու զավակով ուրախացած Չատոն, որական միքանի անգամ ձաշթող անելով, տասն որավար ել կվարեր ու կցաներ, բայց այնքան սերմը չունէր, ուստի յերկու որավարից ավելի չկարողացավ ցանել:

—Ն'հ փճուք իրան, յեթե տա, յերկու որավարից ել կտա,—գոհությամբ ասում եր նա:

Մի ամիս գեռ չանցած հողը կանաչեց, կանաչը

տափի յերեան առավ: Չատոն մի կողմից կանաչ արտերոջն եր ուրախանում ու հուսադրվում, մյուս կողմից գուշգ յեղների և զավակի տեր դառնալով: Բայց Ինչ ասել աղքատի քոռ բախտին. հակառակի պես հենց այդ տարին չորային արավ, յերկնքից նամ չըկաթեց ամենեին և խեղճ Չատոյի «ամակը չուրն ընկավ»: Արտերը ճշմարիտ ե սկզբում բարձրացան, բայց հենց հասկը ծաղիկ ու հատիկ բռնելիս, տապից, տոթից ու խորշակից խաշվեցին, և շատ վախ ու նըվազ պտուղ բռնեցին:

Դրանով ել չեր հուսահատվիլ մոռացված և չարքաշ գյուղացին, յեթե միայն պատուհասներն ու արհալիրքներն իրար չհետեւէին—յեթե զնասը զնասի յետեից չհասներ նրան: Ասված ե թե՛ «հոտի մեջ վնջ մինի տիրոջը». անիրավ գողերը գյուղի նախրի մեջից աղքատի յեղները քշեցին: Խելոք Աբուաշին անգարձ տարան ու մարսեցին, իսկ գիթ Խնձորը պողահարելով նրանց, վզի թովը կտրտելով, յետ եր փախել դեպի իր տիրոջ տունը:

Չատոն կնկանից, կինը Չատոյից ավելի էյին սիրում Խնձորին. կարծես վնջ թե կովից, այլ նըրանց մորից ծնված և հարազատ յեղբայրը լիներ: Կինն արտասուքն այտերին, յեղբայրը մեռած քրոջ նման, քողը յերեսին քաշած՝ գողացված յեղան համար լալիս եր անդադար, իսկ Չատոն, թեև ինքն ել անմխիթար, սակայն տղամարդի տոկունությամբ մխիթարում, հուսադրում եր նրան:

—Վոչինչ, հույս աստված, հալբաթ թե ելի մի վտորմության գուշգ բաց կանի մեզ համար. սզալը լավ բան չի, աղոթք արա, թող գլուխս սաղ մնա. յե-

դած չեղած հաշանս կհավաքեմ, միջից ենքան խըր-
փուկ կըլնի, վոր մի առժամանակ բողազներս կպահի,
ենքան ել դարման կը հավաքվի, վոր մեր Խնձորին
հերիք կանի: Մեծ դարդներս մեր պարտքն ա, վորի
տալու ժամանակն ել հլա հեռու ա. չուել են վախտը
հալբաթ թե աստծով ելի մի քանի դալա կը կալնեմ
ու պարտքս կը տամ, ի՞նչ ես վախենում: Չե՞ վոր ա-
սած ա թե՛ «հուլսը լավ բան ա»:

Ասացվածին խորը հավատալով Չատոն և ամառ-
վա տապն ու տանջանքները տանելով հանդում, հըն-
ձած խորշակահար արտերից ընդամենը քսաննհինգ
փութ ցորեն հանեց, մնացածը դարման դարձավ իր
սիրելի յեղբայր Խնձորի համար:

Դարմանը չուլթան Կժելուց հետո, նա իր նման
միայն մի յեզնատեր աղքատի հետ ընկերանալով, վա-
րուցանքսն արավ կրկին, մի քանի քաշան վառելա-
փայտ իջեցրեց անտառից, ողան նորից կարկատեց և
բարձրանալով անտառը, ելի նորոգեց իր հուսալից թո-
կարդները:

Գ.

Աշունն անցավ շուտով և բարբարոս ձմեռը նո-
րից բռնացավ, նորից սարսեցրեց աղքատներին: Այս
տեղամ, սակմյն, չքավոր Չատոյի ցավը միայն ձմեռ-
վա խստութունը չէր, այլ այն, վոր իր այնքան սի-
րած, այնքան փափագով հազիվ ձեռք բերած յեղ-
բայրը, իր միակ հույս ու ապավեն Խնձոր յեղը ձե-
ռից գնում եր, իսկ անիրավ կղները կամ դալեքը նո-

րից կարծես զեանի խորքերն էյին քաշվել, դուրս չե-
յին գալիս: Թակարդները մնացել էյին դատարկ, վո-
րով անհուն հուսահատություն էյին պատճառում նրան
և վերավորում, կարծես մահու չափ:

— Վճշ. ելի կապվեց բախտս,— անտառից վերա-
դառնալիս ամեն անգամ դառնությամբ հիշում եր նա:
Բայց այս դառնությունն ավելի թունավորվում եր
գու պարտատիրոջ դժոխային պահանջով:

— «Փոզս, փոզս, թե չե համ յեզդ կը խլեմ, համ
ուսելու հացդ, ու, սոված կը թողամ...»:

Յեվ, չնայելով Չատոյի ու կնոջ աղաչանքնե-
րին, մրմնջալի պաղատանքներին, չնայելով նրանց
անհամարձակ, վախվիսելով աղային մոտենալուն և կնոջ
նրա առաջը չոքելուն ու պիղծ ձեռները համբուրելուն,
այնուամենայնիվ, լավում եր նույն անողորմ և ահա-
բեկող ձայնը թե՛

— Փոզս, Փոզս:

— Աղա ջան, աղաչում ենք, յերկու շաբաթ ել
համբերի, բալքի մի տեղից ճարենք, տանք:

«Անկարելի ա, փոզս, եզուց ծեզին հետ փոզս...»:

Չուր չի ասված թե՛ «բռնավորից աղաչանքով
բան չես շահիլ»: Արդարև, վո՛չ արտասուքի հեղեղները,
վո՛չ պաղատանքներն ու խնդիրները վո՛չ խոնարհվելն
ու առաջը չոքելը վո՛չ մի հետևանքի չէյին հասցնում:
Աղայի ասածն ասած եր և նա անողոք եր դրա մեջ:
Նա վո՛չ ամաչում եր, վո՛չ խղճահարվում: Յեվ վերջա-
պես նա աստծուց ել չէր վախենում. և ինչո՞ւ վախե-
նար, քանի վոր հագնար, հազար անգամ փորձելով աղ-
քատի աստծո կուրուլթյունը, նրա աչքի տուաջ համար-

ձակ շարունակել եր իր անդգամությունները և միշտ ել անպատիժ մնացել:

Այն, վնչ մի զիջողություն և վնչ մի պայման: Ադան զորեղ կերպով մատը թափահարելով իր ստրուկները վրա, պահանջում եր իր փողն ու, կրկնակի, յեռակի տոկոսը, վաշխը:

Չատոն ու կինը հուսահատ բեկված սրտով, ձեռքները ծոցներում, աղքատի աստծուն ատելով, քաշվեցին իրենց նորից ավերվելու վտանգին սպասող խըրճիթը, վորի մի անկյունում իրենք եյին տեղավորված, մյուսում Ննձորն եր կապված: Այնտեղ նրանք մնացել եյին տրտմած ու քարացած: Առաջն ածած խոտը Ննձորը կերել, նստել և բերանը փրփրացնելով, յերկար ու քաղցր վորոճում եր, ապա յերբեմն փշտացնում և յերբեմն ել վորոճելուց դադարելով տնքում, ինքն իրան կողքը լիզ տալիս, ու, կարծես մի ինչոր բան զգալով, փնջալեն դեպի ինքն անտեր դարձած տերերին նայում, նրանց աչքն ու հոնքը պահում:

Այսպիսի վայրկյաններից մեկում Չատոյի կինը հանկարծ զգաստանալով քարացած դրությունից, աչքերը արցունքներով լցված մոտեցավ Ննձորին, վորդու նման գրկեց նրան, մորմոքվելով ու կարոտով պինդ կուլով փաթաթվեց և խիստ անհագ կերպով ջերմաջերմ համբույրներ տալով դնչին, այտերին, ձակատին ու աչքերին, լուռ և անվերջ արցունքներ սահեցրեց իր արցունքից այրված այտերի վրայից: Չատոն նույնպես լուռ եր ու լցված, բայց աշխատում եր մասամբ թազցնել իր արցունքները և կնոջը քաջալերել:

— Լավ, Նարգիզ, յերեխա հո չե՞ս, ի՞նչ ես լաց լինում:

— Ե՛. ի՞նչ անեմ, ի՞նչ սե հողը գլխիս տամ, վոր լաց չը լինեմ. ես ա ելի մեր կարողությունը. ես ել եզուց պարտքատերը գալու ա, վոր տանի. կարկուտս նրա գլուխը նրա համար եմ բերանիս պատառն ել հեռ քաշել ու սրան ուտացրեմ, — արտասովահեղձ հեկեկանքով պատասխանում եր գեղջկուհին և նորից փաթաթվելով, յեղջյուրներից բռնած կրկնակի համբույրներ տալիս սիրելի կենդանուն:

— Դե լավ, ե, ամոթ ա: Վա՛հ, դո՛րթ վոր յերեխա ես դառնում:

— Ինչի՞. դու չլսեցի՞ր, ինչ ասեց...

— Վոր լսեցի, ի՞նչ. նրա հերն ել անիծած, շատ ել վախեցնում եր, յեդո՞. կը թողամ, վոր տանի. իմ պարտքը 48 մանեթ ա, յեզս հարիբ: Վո՞նց կը համարձակվի, վո՞նց կը տանի. ես հո արինս շաղ կը տամ, — ույժից վեր ահամա կեղծ վստահությամբ կնոջ առաջ պարծենում եր Չատոն:

— Հն, վա՛յ գլխիս. եդ եր պակաս. միթամ թե աշխարիցս լիացար, վոր արինդ էլ շաղ տաս, — մարդու յերեսին նայելով, հեկեկաց կինը:

— Հաբա ի՞նչ ասեմ, վոր եդպես ամաչեցնում ես ինձ. թե զո՞չաղ ես, լաց լինելուդ տեղակ աղոթիր սաղ մնամ, վոր գնամ մի տեղից ճարեմ, բերեմ իրան սեվացնեմ:

— Վորտեղից, ումից ո՛ւր ա, վոր աչք անողորմ բաց անի աստված...

Այս դառնությամբ Նարգիզը մի առ ժամանակ, կարծես աստծուց դժգոհ, լաց ու հեկեկանքը զսպելով, արմունկը ծնկանը, թաթը քնիրակին (քունքին) դրած՝ վշտակեզ սրտով ամպամած հոնքերի տակից նայում

եր բոցոտվող կրակին, վորի բոցերն ու կայծերը նույն-
քան անհասկանալի և անխորհուրդ էյին նրա համար,
վորքան և՛ տյն, թե ինչո՞ւ այս անիրավ աշխարհում
մինը պետք է առատ ուտի, խմի, հագնի, զուգվի ան-
հոգ, վո՞չ ցանի, վո՞չ հնձի, թուչունի պես կյանք վարի,
տանի, տիրի, գերե, ուրախանա բախտավոր որեր տես-
նի: ու ցնձա, իսկ մյուսը քաղցած, ծարավի, մերկ աճը
սրտումը, մահը մտքումը, սրան նրան գերի դառնա:
Ինչո՞ւ մինը պետք է անչափ ունենա, իսկ մյուսն ան-
համեմատ վոչինչ չունենա. ինչո՞ւ մինը պետք է ծա-
ռայի, մյուսը տիրանա, հարստանա. ինչո՞ւ չպետք է
արդարություն լինի, թե կա աստված և ամենին ել
նա՞ յե ստեղծել:

Բայց իսկապես Չատոյի դրությունն ավելի զբ-
վար եր. նրա սրտակեղ մտահոգությունն ու մորմոքվելն
ավելի կարեկցական եր քան Նարգզինը, վորովհետև
վերջինս բացարձակ հայտնում եր իր սիրտը լցված
դարգն ու գառնությունը, իսկ Չատոն թագուն ներ-
սիցն եր այրվում, խորովում, խորովվում, չըցանկա-
նալով կնոջը ցույց տալ իր թուլությունը, սա աշխա-
տում եր շատ չկոտրել նրա աչքում և կոտրել նրա
սիրտը. այլ աշխատում եր տղամարդությունը պահել,
վորքան այդ հնարավոր եր մինչև վերջին վայրկյանը:
Մակայն, այդ կեղծ և անմեղ դրությունը իսկույն կար-
դացվում եր նրա թախծալի և ակոսված դեմքի ու ամ-
պամած հոնքերի վրա:

Մոգն ընկածի նման, ճշմարիտի և, մեր գեղջուկ
յեղբայրն աշխատում եր կյանքի հալածող ալիքների
հետ կռվելով մի կերպ լողալ, գոնև մի ցախից բռնել
ու ափ դուրս գալ, սակայն նրա թույլ նեցուկները

խիստ անհույս էյին: Որինակ՝ նա մի կողմից հու-
սազրվում եր թե՛ «եզուց վոնց վոր լինի մի տեղից
48 մանեթ կը ճարեմ, ու յեզս կազատեմ»: Մյուս կող-
մից ել սարսափում եր մտածելով թե՛ «մի գուցե չը
ճարեմ ու աչքիս լիսը հանեն՝ յեզս քշեն ու տանե՞ն»: Ս-
յս մտքերը հրեշներ էյին դարձել և միանգամայն ա-
հավորել նրան:

Չատոն նստել եր ոջախից ծոանց, և՛ մերթ նա-
յում եր իր սիրելի յեղբայր Խնձորի փայլուն աչքե-
րին ու փրփրալից վորո՞ճին, մերթ բախտից խոտված
իր վշտադեմ Նարգզին ու հուզվում և ալեկոծվում
գաղտնապես. և՛, հենց այս գաղտնիքի մեջ եր, վոր
փշրվում եր ու խորտակվում նրա անմեղ և անգոր
հպարտությունը. նա սրտի այս դառնությամբն զգում
եր, վոր ելի գերի, ու ստուգվե՞ն գառնալու աղային,
վորի խոսքից, յեթե մորթվեր ել, անողոք տանուտերը,
անարդար, կաշառասեր ու խաթրամոլ գատավորն, անց
չի կենալու, այնպես վոր, յեթե նույնիսկ ինքը պարտ
ել չը լինի, բայց աղան, խղճմտանքը վորտի տակ տը-
ված, ասի թե պարտ ե, նա իր ծայրը տափակ մըտ-
բակը և կամ տմկած հոնի ճիպտոր իր խեղճ գլխի, աչ-
քի ու հոնքի վրա փթուրփթուր, կտորկտոր անելով,
պետք է անպատճառ խլի և տա ու յերեկոյան գնա գե-
ղին վոսկին առնի, կարմիր գինին խմի և առնուս
խորովածն ուտի ու բեխերը սրելով դուրս գա սրա
նրա վրա զոռզոռա, սրան նրան, նույնիսկ հենց իր
զվարճության համար ել մտրակի տակ զցի:

Չատոն գարուրանքով տեսնում եր նույնպես, վոր
իր հաղիվ կարկատած կամ նորոգած ծիծեռնակի բունը,
այսինքն իր հայրական անշուք և աղբառ խրճիթը

նորից ուզում են ավերակ դարձնել և կտրել ու մարել ոջախի նվազ ծուխն ել, վոր հենց նոր եր ծխել սկսել: Նա սրտի դառնությամբ հիշում, պատկերացնում եր, այնքան թուրքն ու մուրը, այնքան արհամարհանքն ու անպատվությունները, վոր տվել ելին նրան այն տեսակ-տեսակ խանութներն ու աղաները. յերբ հիշում եր նույնպես, վոր նորից պիտի վերադառնան ուրիշի դուռը, ուրիշի դռանն ու ուրիշի հողումն աշխատեն, տանջվեն ու մնացած կյանքներն ել մաշեն, նրանց դաժան աչքն ու հոնքը պահելով—ահ ու դողով մի կտոր հաց ուտեն, ինքն իրեն մոռանում եր և այնքան խորասուզվում թունավոր մտածունքների մեջ, վոր մարդ նայելով նրա քարացած գրությանը, յերբեմն ել կարծում եր, թե արգեն ուշքը կորցրել է:

—Վո՛հ, աստված, ինչո՞ւ ստեղծեցիր ինձ, տանջելու համար,—ժրմնջում եր նա:

—Ա՛խ, աստված, աստված, բախտից զրկող աստված,—մորմորվելով հառաչում եր կինը, նորից նայում խնձորին և իր ճակատը բռնում:

Ահա այս դարդ ու վարամով համակված, մարդ ու կին ամբողջ գիշերն իրենց յեղբայր խնձորին հրածեշտի համբույրներ տալով, անքուն ու արտասուենքից այրված աչքերով թեպետ լուսացրին, սակայն չգիտեցին թե ի՞նչպես պիտի բաժանվեյին նրանից, վորովհետև բաժանվել խնձորից, այդ նշանակում եր, թե գրկներից խլել իրենց յերեխան և աչքների առաջը չուրը նետել նրան:

Առավոտը սև լուսացավ Չատոյի համար: Տանուտերը, վաշխառուն և սրանց կամակատարները, մինը մտրակն առած, մյուսները դադանակները, մազոտ քուրք-

ները հագած, համարձակ ավազակների նման, գնում ելին զեպի ողան: Այն միջոցին Չատոն, ամենածանր մտածողության տակ, դուրս յեկավ նրանց առաջ և վշտից խեղդվող ու ընդհատվող ձայնով սիրտ արավ մեկ ել խնդրել, վոր խղճան իրան և մի քանի որ ժամանակ տան վոր փողը ձարի: Բայց զմեք դարձյալ Յեզը խիստ դուր եր յեկել աղային, նա վաղուց եր ասել թե՛ «են յեզն ամենեկն աղքատի յեզը չի, հարիր մանեթ նազդ փող արժի, ճանկս եմ գցելու», ու մերժեց:

Չատոյի Հույսի այս վերջին թեղն ել կտրվեց. այնուհետև աներևակայելի և աննկարագրելի եր նրա վիշտը, վոր կարծես թե սրտի բոլոր արյունը դուրս եր խփել: Ավազակախումբը յերբ ներս մտավ յեզը դուրս անելու, Չատոն ու կինը ամբողջպես արտասուքի հեղեղ դարձած, փաթաթվեցին իրենց յեզերը և համբույրներով հեղեղեցին նրան ևս: Ապշել ու վըշտացել եր նաև կենդանին. կարծես նա ել եր հասկանում այն չարությունը, այն անգթությունն ու վտանգը, վոր մոտենում եր իրեն, նա ևս չուած աչքերով և անուած հայացքով նայում եր զեպի անծանոթները, զեպի իր տիրոջ թշնամիները, իսկ տերերը զեռ փաթաթվում ելին նրան. կենդանին մուխում ու փախուստի յեր դիմում և ուզում եր թոկը կտրի, կարծում եր յերևի, թե հանդի ավազակներ են: Նրանք թոկը հետ արին սյունից և յեզը դուրս քաշեցին ողայից, բայց կենդանին խրտնեց հանկարծ և, թե տերերին և թե հափշտակողներին բավական տեղ քաշ տվեց դուրսը: Այստեղ Չատոն համարյա ցնորվելու չափ շփոթված դրության մեջ մի քանի վայրկյան, կնոջ հետ միա-

սին, թեպետ անորոշ և անհավասար գիմադրութեան փորձ արին, սակայն մտրակների և դազանակներէ հարվածները հետ մղեցին նրանց և յեզը քշեցին, տարան, իսկ Չատոն ու կինը, յեզբայրը թաղած յեզբոր ու քրոջ նման, կարծես գերեզմանատնից վերադարձան ողան, ուր ամբողջ որը դառն հեկեկանքներով և անվերջ մտածմունքերով անմխիթար սգի մատնվեցին:

2.

Մյուս որը մառախուղը քաշվելով դաշտերից, գնացել էր հեռո՛ւ, բարձր սարերի վրա ամբար-ամբար յիզել ու կիտվել: Չյունով ծածկվել էյին սար, ձոր, ծառ ու ծմակ, թուփ ու մացառ և այս վերջիններիցս ամեն մինը մի մի դեզ, մի մի հսկա էր դարձել:

Փոթորիկ էր վերկացել...

Յեզ, այն ձյունաբերձ լեռների գագաթներից, կիտված ամպերը հետզհետե նվազելով, ձխվել էյին սկսել դեպի վեր-վեր. իսկ յերկնքում յեղած մուժն ու մռայլ ամպերն իրար խառնված, խիստ հալածվում ու ալեկոծվում էյին, կարծես Չատոյի սրտի, Չատոյի բախտի պես:

Դիզված ձյունն ըստ յերևույթին թե դյուղացուն, և թե քաղաքացուն առատութեան հուշս էր ներշնչում— իսկ թե ազգերի ու ցեղերի, տերերի ու հպատակների, լծվածների ու ազատների, նավորգների ու ճանապարհորդների, պանդուխտների ու վորբերի այրինների, աղքատների ու պարտքատերի համար ի՛նչ էյին գուշակում յերկնքում հուզվող ու հալածվող ամպերը, այդ

խիստ դժվար էր գուշակել ու մարգարեանալ, վորովհետև այն անհուն հեռավորությունից վնչ հրացանի ձայն, վնչ գոռոն էր լսվում և վնչ էլ թնթանոթի կայծակների վորոտ ու շանթեզի խորովը խոսում: Մակայն, ինչ էլ վոր լինելու յեր, կարծես գաղտանապահութեան և խորհրդավորութեան մեջ էր կատարվում այնտեղ, այն բարձր ու մաքուր և մարդկային գագառությունից ազատ աշխարհում:

Այսպես, Գուգարքի խաղաղությունն էլ էր խանգարվել:

Քամին հետզհետե հերստովելով բռռալե փչում էր, ձյունը սրբում ձորերն էր թափում, դար ու փոս լցնում և տեղ-տեղ էլ գետինն անողորմաբար գոփում, քերում ու վերքերի նման բաց անում,— մարդու ջան սարսեցնում, մոմուռ ձգում, վորն ու ձեռը տափից կտրում, ականջները կարմրացնում, պոռչները կապտացնում— կապույտ լեղակ դարձնում ու մղկտոցը ասման հասցնում:

Սակայն, քամին սոսկալի ծավալ և ուժ էր ընդունել հեռվում, բարձր սարերի վրա, անտառների գլխին: Այնտեղ՝ անտառում և լեռների վրա այլևս ամպ չէր թողել մի քանի ժամվա ընթացքում. այնտեղ գոռում, վոռնում, անհղապես վշտում, շառաչում էր ամեն ինչ: Ճոճոցի, տրաք-տրաքոցի անհղ ձայներ էյին լսվում ու ականջ խլացնում. այնտեղ՝ ձիուների ծանրութեան տակ և ամենի փոթորկի կրկնալիք հոսանքների առջ ճոճում էր քոլը, և, վինը մյուսի յետևից հսկա ծառերը ճղատվում էյին և ականջ խլացնող զղրդյուններով ու ձայնոցներով վայր թափվելով, խորտակվում և անդունդները հասնելով, խշր-

վում, վերջում եյին անվերջ: Յեւ, յերբ մի ըուպե դու,
շունչդ քեզ քաշած, ականջ եյիր դնում դեպի այն
կողմը, դեպի բնության արհավիրքները, ինքդ քեզ
միանգամայն մոռացած, հենց իմանում եյիր, թե այն ե
ամբողջ աշխարհը տեղահան յեղած՝ գլորվում ե դեպի
նեոն ու սանդարամետը:

Ագահ փոթորիկը, վոր զայրագին տակն ու վրա
եր արել անտառն ու ծմակը, վոչինչ չեր խնայում.
ահեղ վոռնոցով կոծում, հարվածում եր աջ ու ձախ—
կ' բլրին, կ' բաշին, կ' լեռան կրճքին, և վիշապի նը-
ման աներկյուղ, ամուր և ջիլ ու ամեհի կաղնիներն
անգամ, իրար վզով փաթաթելով, տակուահեղ, ճղնա-
կոտոր անել եր սպառնում: Նույն փոթորիկն անար-
գել, ապա կ'ս ավելի զայրագին, ժփուն ու մրրկածով
արագությամբ անցնում եր Գագա դաշտերի և հովիտ-
ների վրայով, վորոնցից մեկի ականջում, ուր շատ
թե քիչ ձմրան արևի նշույլ եր ընկնում, վորբի նման
պատսպարված կարծես, անհամարձակ դեպի սառցա-
պատ ծմակն եր նայում Պե. գյուղը, վորի անբախտ
բնակիչն եր նաև մեր յեղբայր Չատոն:

Այս գյուղի շրջակայքում ձյունի ավազից նույն-
պես ամպեր եյին գոյացել, վորոնց ուժգին և պտտուն
հոսանքները դաշտերի մեջ ծովի յեռման ու ալեկո-
ծության կերպարանք եյին ստացել հակաշունչ սա-
տանի քամիներից:

Բարկուժյուն, իրավ, բնության խորհրդավոր
բարկություն: Ամեն տեղ կարծես մահվան գույժ եր
սփռվում, այնպես վոր, ահաբեկված եր ամեն ինչ.
այսինքն՝ կ' շնչավոր, կ' անշունչ տարերք այն աշ-
խարհի:

Գեղջուկները, գետնի խորքերը քաշված մըր-
ջյունների պես, ողաներն եյին քաշվել, այնպես վոր,
կրակից ել խիստ այրող ցրտի ու բուքի դաժան յերե-
սից և սաստկությունից գյուղամիջերումն ել մարդ,
անասուն և զազան չեր յերևում: Հպարտ, աղքատի,
թույլ և կամ ակռքի կտրածին քերթող ու մտրակա-
հար անող տանուտերն անգամ քաջություն չուներ
դուրսը յերկար կանգնելու, չնայելով նույնիսկ իր
գայլամորթ բրդոտ քուրքին, իսկ հեզ յերեցն արդեն
քիթ ու մուտքը սառած ցուրտ ու խոնավ յեկեղե-
ցում վոտները բարցրուքաշի անելով, իր ալելունն ու
տերողորյան իրար վզով փաթաթելով, վերջացրել եր
վաղուց և դողողալե ու ատամները գնդգնդացնելով
տուն եր շտապել, ազատվել մի կերպ:

Թռչունները սառել, փետացել, կամ թափվել եյին
ձյունի մեջ և կամ հենց թառ յեղած տեղները սառել-
չորացել ու կպել եյին ձյուղերի վրայից: Ծները ծըմ-
բում, վոռնում եյին տանջվելով գրսում: Իրգոտ ու
մեծաքամակ արջն իսկ, խորը չլան եր մտել լեռան
սրտում և, յուղալից թաթը վաղուց ըռելը դրել ու
մոմոցը կտրել այնտեղ. իսկ գայլը, հովվին քնահա-
րամ անող կատաղի թշնամին, և գեղջուկի համար
այս վտանգավոր և անհագ զազանը, աչքերը չսած
թագնված վորջում, ամբողջ շաբաթ եր համարյա, վոր
անմեղ գառների արյունով ժանիքները չեր արնոտել:

Հապա մարդկանցից ո՞վ եր խելագարվել, և կամ
գլխիցը ձեռք վերցրել, վոր առանց շատ տաք հագուս-
տի, առանց ընկերի և հույս ու հավարի, այն հուր-
հրողմունքին և այն բքաշունչ դժնդակ ժամին,
մեն-մենակ տանից չլը դուրս գնար:

Բայց ինչպես չը հավատալինք բաց աչքներինս, յերբ պատուհանից ուշի ուշիով դիտելուց հետո, ապշելով ու սարսելով համոզվեցինք, թե ամենեին ուրվական չեր մեր դեմ հանդիման «չոլ դուրս յեկողն», այլ մեր յեղբայր Չատոն—մի դժբախտ մարդ, մի հարստահարված եակ և վերջապես մի մոռացված ընկեր, վոր միմիայն իր պատուոտուն, մեջքը հաղիվ ծածկող քյուրքին ապավինած՝ գյուղից դուրս եր յեկել համարձակ և բավակսն հեռվում—սառուցների և զամբերի վրայով, փոթորկի ու ձնավազ հողմերի հետ կոխվը տալով, գնում եր դեպի վար...

— Չորանանց Չատոն ա... անխրափսերը համ իրան, համ յերկուհոգիս կնկանը ծեծեցին, անարգեցին, յեզը խլեցին տանն, համ ել ջարմի տակ են գցել, հալբաթ հարևան գեղերիցը փող վերցնելու ա գնում,—գուշակեց բարեկամս, վորի տանը հյուր ելինք իշած յես ու ընկերս:

— Անշուշտ, յեթե այդպես անողորմ չը լիներ տեղի ունեցած վոճիրն ու անարգանքը, թշվառ մարդն այս սոսկալի սառնամանիքին փոթորիկների մեջ չեր ընկնիլ յերբեք:

— Այո, կարիքը մարդուն ինչ տես, անել կը տա. ինզճ մարդ, տեսեք տեղը վորքան է դժվարացել, վոր մոռացել է և՛ խրճիթ, և՛ կին, և՛ զավակ, և՛ մինչև իսկ իր անձն անգամ:

Յեվ, մինչդեռ մենք զարհուրանքով նայելով դեպի ձյունի ավազով ամպամած և՛ հողմակոծ դաշտը, ապշում, բացականչում ելինք այդպես ու կարեկցում նրան, հանկարծ մի ավելի սրտաձմիլիկ տեսարան ևս բացվեց մեր առաջ,—հանկարծ մի հուսահատական, մի

ազեկաուր ճիչ ազմկեց մեր սիրտը, ցնցեց մեր հոգին և պաղեցրեց մեր արյունը:

Չատոն, վոր մի վաշխառուից հալածված մյուսի մոտ եր վազում, իր կրած հարվածներից, իր ցավի զառնությունից մոռացել եր կնոջը հայտնելու իր չոլ դուրս գնալու նպատակն այն չար ու դաժան ժամին. ուստի կինը յերկար կանչելով յետևից և պատասխան չստանալով, կարծել եր, թե նա ցնորվել է, մանուկն ողայումն անտեր թողած, վոտաբոբիկ, մազերն արձակած և հագի ձորձերը պատուտելով, «հայ, հարսյ, բռնեցեք, գնաց, կորավ, բռնեցեք» աղաղակելով վազում եր հետևից, վոր բռնի, խլի, ազատի նրան անողորմ հողմերի ձեռքից, վորոնք նուշնպես տանջում ելին մերկ աղքատին, բայց հասնել չեր կարողանում, մանավանդ վոր, հզի եր անբախտը: Հողմերը հրեղեն ելին դարձել կարծես, իսկ Չատոն հալածական: Նա իր բախտի անիվը հեծած դնաց, սառցաշունչ հողմերի ու ամպերի մեջ կորավ, անհայտացավ անարեկված կնոջ աչքերից: Կենդանի յետ կը դառնար արդյոք, թե մի տեղ, մի վորեւ փոսում ձյունի ու զամբերի տակ սառած ու մեռած կը գտնեյին, դա անորոշ եր մեզ համար: Իսկ յեղկելի կինը հուսահատ և շնչասպառ յետ դարձավ հազիվ, և, բռնով ձյունը գլխին տալով, մի կերպ հասավ իր ցուրտ ու խոնավ, իր բորանահար ու դժբախտ ողան, ուր անտեր թողնված յերեխան արդեն ճաքվում եր լացից ու վախից:

Նարգիզն ողան մտնելուց հետո ել դուրս չեկալ այնտեղից: Յերեք թե չորս ժամ չանցած ողայի դըռանը մի քանի նույնպիսի խեղճ կանայք յերևացին: Նրանք շտապ շտապ դուրս ու ներս եյին անում. մինք մոտակա մարագից մի կոնակ ծղնոտ կամ խոտ ներս տարալ, յերկրորդը մը գիրկ խշուր-փշուր կրակի համար, իսկ յերրորդը մի սափոր ջուր: Նարգիզը հիվանդացել էր. ըստ յերևույթին նրա յերկունքը բռնել էր, ուստի տատմեր պառալը ծննդյան համար պատրաստություն էր տեսնում: Թշվառ Նարգիզն այն քրիստոսամուր խոտի կամ ծղնոտի վրա պիտի ծնե՞ իր մանուկը: Ծղնոտն իբրև անկողին, ձգեցին խոնավ պատի տակ, և բերին չոքացրին նրան ու մի պաշառոտուն փալաս ել ծածկեցին վրան: Նրա ճիչը յերկունքի սաստկությունից յերկինք էր հասնում. ամբողջ գիշերը տանջվեց Նարգիզը, և, չնայելով ցավի հետ նրա ասածուն ուղղած պաղատանքներին, սուրբ աստվածածնին արած աղոթքներին, չէր ազատվում. շատ դժվարացել էր թե նրա և թե տատմոր դրությունը. ճշմարիտ է, վերջինս, իբրև կարեկից հարևան, անկեղծությամբ աշխատում էր ոգնել թշվառին, բայց իսկապես իր անմեղ ազիտությունով և կոպիտ ու վայրենի գործողություններով նրան արդեն մահվան դուռն էր հասցնում:

— Ո՛վ աստված, ո՛վ Մարիամ աստվածածին, ոգնեցե՛ք ինձ, ոգնեցե՛ք...— անավորված ու շփոթված

պաղատում էր տեղը նեղ ու հուսահատ գեղջկուհին:

— Զարմանք: Եստեղ մի հիլլաթ կա. վաթսուս տարեկան կնիկ եմ ու եսպես դժվարածին ծընընդեկան չեմ տեսել,— զարմացճամբ և հուսահատված նկատում էր տատմերը:

Տարորինակ յերկունք: Տարորինակ և կասկածելի յեր թվում նաև պառավին. նա արդեն հոգնել և ունեցած բոլոր հնարագիտություններն սպառել էր, ուստի, թեև ուշ, բայց և այնպես հարցրեց Նարգիզին:

— Նարգի՛կ, վճրդի, դրուստն ասա, հաշիվդ գիտմա, վաղեղ ան (ժամանակդ ե՞), թե որպապես աս:

Պառավի հարցին իբրև պատասխան, յերկու մատը ցույց տվեց, վորովհետև չխոսկան էր նրանից, այսինքն՝ հին և անմիտ ավանդության համաձայն, ամաչում էր նրա, իբրև հասակավորի հետ, ասծու տըված լեզվովը խոսել:

— Վճւյ. յերկու ամիս ել կան քու խերդ ու ճարդը շատ ըլի, աղջի. վոր եղպես էր, բա ինչո՞ւ չեյիր վախտին ասըմ, վոր դալլաք բերել տանք:

— Ո՛ր... կմեռնեմ, դալլաք. վանայ...

— Վոր վայ ես անում, այ խեղճ ու անձար, վճրն ա լավ, անաջալ մեռնիլը, թե դալլաք կանչիլը: Թո՞ղ կանչենք, վճրդի, թող կանչենք, նա քեզ կ'ազատի, ուստա մարդ ա...

— Ո՛ր... վանխում եմ...

— Դե վոր դալլաքից վախենըմ ես, թող չոբան կանչենք:

— Վանյ. կը մեռնեմ. գիմանալ չեմ,— դողողալով ճշում, սարսափում էր նա թե մեկից և թե մյուսից և այս բոլորը չխոսկանը հայտնում էր մի հասա-

կավոր մի այրիի—իբրև թարգմանի բերանով:

Ինով, սոսկալի բան. առաջինն իր դանակով ու ածելիով, իսկ յերկրորդն իր ավելի կոպիտ ու վայրենի միջոցներով քանի՛ քանիսին զոհ ելին տվել զյուզում, ուր վոչ բժշկի հետք եր յերևում և վոչ ել մանկաբարձուի, վորոնք գեղջուկին ու գեղջուհուն մոռացած մեր որերում, իրանց դեռ ազատ քաղաքացիներ ելին համարում և ուսմակաւն կյանքը տատմերներն, գալլաքներին ու անասուններ ծնեցնող չորաններին թողնում:

Ի՞նչ աներ, վոր չը սարսափեր խեղճ Նարգիզը—մեր մոռացված աշխարհում մոռացված քույրիկը. նրա բախտակիցներին ու ընկերուհիներին շատերը, նույնիսկ իր աչքի առաջ, նույն գալլաքների ու չորանների ձեռքով մեկը մյուսի յետևից գերեզման իջնելով, իրանց թշվառ ծնունդներին ել վորը ու անտեր, անմայր ելին թողել՝ իբրև ազքատության ժառանգներ:

Բայց պառաջն անկեղծ եր. նա շարունակ համոզում և մինչև իսկ հանդիմանում եր վախկոտ ու անսիրտ ծննդկանին:

— Աղջի, նամուս, ղեյրաթ ունեցիր, ամոթ ա, ինչո՞ւ ա սիրտդ ձաքում գալլաքից, թող կանչենք, վախիլ մի...

Յեվ, մինչդեռ կը կանչեյին բժշկապետ «չորանին», թշվառ ծննդկանը նոր չարիքի կրկնակի յերկյուղի ազդեցության տակ, ույթ տվեց ուժգին և վիժեց յերևսան այն կոշտ ու փշոտ ծղնոտի վրան:

— Խեղճ ու նաչար և անբախտ Չատոյի աչքը լ՛ույս.— գժկամակությամբ և ցավակցաբար հոգվոց հա-

նելով, ասաց պառաջն, փաթաթեց նորածին աղջկան և սկսեց ծածկել ու պատսպարել անբախտ Նարգիզին, վոր հազիվ ուշքի յեկած նվազած տեղից, սկսել եր սաստիկ դողացնել ցրտից, մանավանդ վոր խիստ քրտնած եր առաջուց: Բայց ինչո՞վ պատսպարեր. անկողին, տեղաշոր կա՞ր դատարկ ողայում. աստված անվողին համարեր այն հին քեչան վոր գցեց վրան՝ վերմակի փոխարեն: Նարգիզը չոր ու լանթ կարպետի տակ այնպես եր դողդողում ու վրվթացնում, վոր յեղածն ել վրայիցն ուզում եր փախչել կարծես: Պառաջն ու ջախը վառել տվեց իր ոգնական հարևաններին, վորքան կարող եր, տաքացնել տվավ ոգան: Ոգան տաքացավ, հիվանդը հանդարտվեց և մի առ ժամանակ խիստ կարոտով քնեց, հանգստացավ այնքան հոգնածությունից, իսկ հիվանդապետ կանայք խղճալով նրան և քունը չխանդարելու համար, ցածր ձայնով ըսկըսեցին զրույց անել ախուր դեպքերի մասին:

— Խեղճ Չատո, բախտը խի՛ շատ անջ եր, կնիկն ել աղջիկ ծնեց. գոնյա տղա լիներ, վոր ուրախանային, առանց են ել՝ սգվոր են յեզան համար:

— Ե՛հ, ուրախանան, չուրախանան, կարկուտս սրա գլուխը տանի, ապրելու հո չի, կեկուի որապակաս զադ ա,— անմեղ մանկան յերեսը բանալով, նկատում եր տատը:

— Աստված պակասցնի նրա պես պարտատիրոջ որն ու կյանքը, հալբաթ խեղճ կնկա մեջքին են ծեփել, վոր սհե անժամանակ շարտեց յերեխան:

— Դուր կնկանը ձեփելն եք ասում, բա մարդո՞ւն: Ո՛ր, յես տեսա, ամա իմ անզգամ արնիկեր դյուշմանն ել (իմ թշնամին ել) վոչ տեսա. խեղճ Չատոյի ջանումն

ել սաղ տեղ չթողին, չիմ ջարդեցին.

— Բա հիմի ո՛ւր ա, վճռուեղ ա գնացել ես բուք ու բորանին:

— Գնացել ա, վոր մոտիկ գեղերիցը մեկից պարտք վերցնի ու բերի յեզն ազատի:

— Հա: Ի՛. երնակ նրա հավատին. վոր բերի, ել Թուխինի անհոգի ջհուղը նրան յեզն ա յետ տալու. հնա տնրավ ինչ տարավ. մենակ սրանն ա տարել. ո՛ւմը խղճաց, ո՛ւմը հետ տվեց, վոր սրանը հետ տա...

Ը.

Աքաղաղներն արգեն վաղուց կանչել էյին և ուզայի յերդիկից դուրսը լուսապեծին եր տալիս. գլուղի ներքի ձորում շները վրա էյին թափվել մի մարդու, վորը ձեռքի գավազանով հագիվ թե կարողանում եր իրեն ազատել կատաղի գազաններից: Շներն իրենց սահմանից հալածելով նրան, հետ դարձան: Յեկողը դժբախտ Չատոն եր: Նա իր սիրելի Խնձոր յեղբորն ազատելու համար յերևի շատ փողատերերի գունն եր բախել, ազաչել, պաղատել, բայց բոլորիցն ել մերժվել եր: Ժողովրդի իմաստուն առածի համաձայն «շունը շան վտար կոխել չեր», այսինքն՝ նրանք, այն քարասիրտները, չէյին ուղեցել իրենց նմանի խաթրին դիպչել «մի Չատոյի համար» և խեղճ աղքատի ձեռը ծոցումն էյին թողել: Նա գալիս եր խիստ հուսահատ, գլուխը կախ, ջարդված ու փշրված քայլերով, սառած ու կապտած շրթունքներով բերանի գոլորշին բեզերի ու հոնքերի վրա ցքիռացած և լեզուն կապ: Յեվ, յերբ

այդ դրության մեջ յեկավ, ներս մտավ ողան, տեսավ հավաքված կանացն ու ամուսնուն պառկած, ավելի ահաբեկվեց, ավելի շփոթվեց նա և շատ աշխատեց, վոր խոսա, հարցնի բանի էյութունը, բայց չկարողացավ: Նա համրի նման անորոշ ձայնով միայն կարողանում եր «ս ս» անել և կղվարած ձեռներով ցույց տալ, միքանի նշաններ, վորոնցից հասկացվում եր, թե կնոջ առողջության մասին և հարց ու փորձ լինում, իսկ վերջինս արթնանալով նայելով նրա անհույս դրությանը, անվերջ հուզմունքով և ամենաարտաշարժ հեկեկանքներով լաց եր լինում իր արյունոտ անկողնում:

— «Ա՛ ս, ս սխ»,—նորից ու նորից Ղլլլացնում եր սառած Չատոն և անորոշ շունջներով խնդրում կարծես, վոր կինը լաց չլինի:

— Այ՛ջի, սյ վորդի, մեղք ա մարդդ. սիրտդ պահի, թող վոր տաքանա, մի քիչ հանգստանա, բալքի լեզուն բացվի,—խնդրում, հորդորում էյին բարի կանայքը:

Նարդիզը հազիվ գսպեց իրեն, վորով նա ել խաղաղվեց փոքր ինչ, բայց ուզում եր թե ամբողջապես կրակն ընկնի, այնպես մրսում եր ու վրվթացնում, ատամներն իրար խփում:

— Սաթալձամ ա ես մարդը (թոքերի բորբոքումն ունի), ինչ անենք. ի՛նչ գցենք տակը, ի՛նչ վրան, — ուզայի դատարկ քյունջ ու պուճախին նայելով և ձեռքներն իրար կցելով, կանայք հարցնում էյին միմիանց:

Ի՛նչ անէյին խեղճ այրիներն, իրանք ել միեկույն դրության մեջ էյին—մի մի ձեռք լանթ ու փթուր անկողին ունէյին, վորոնց մեջ հազիվ իրանց վորբե-

բին եյին փաթաթել: Վերջապես մեկը յիշեց, վոր էր ուզայում մի ավելորդ կարպետի կտոր կա, մյուսն էլ վազեց բերեց մի չվալ. չվալը տակը, կարպետի ձորձն էլ վրան ձգեցին և Չատոյին ոջաղի առաջ, կրակից մոտ պառկեցրին:

Կես ժամից հետո, սոսկալի եր Չատոյի դրուժյու-նը. աաքուժյունն անչափ եր. նա անջուր պղնձի պես այրվում էր ու շնչում ամբողջ կրծքով, անհանգիստ լինում սաստիկ և անդադար վրայի կարպետի կտորը դեն շարտում ու տնքում, վռչում, անխ-նի քաշում, մարդու յերեսի պել-պել նայում և ապա աչքերը խփում ու մոնչում. յերբեմն էլ՝ բազուկներն աջ ու ձախ յետ տանում և վերաբերելով կրծքին զարկում. և յերբեմն էլ՝ վեր թռչելով, աչքերն սճորքին հառում, հաբ-ձակում գործում դեպի վեր, դեպի վար և նորից, հրեշ տեսածի պես, ահուում ու զարզանդով յետ նահանջում և սկսում հետո էլ հանդատության մեջ դառանցում էր պարտքի, յեզան և անխիղճ պարտատիրոջ մասին մի-միայն:

— Ծանոթ թունդ սալթամ ա, ամա՛ ինչպես յե-րևում ա, լեզուն կը բացվի, չունքի համ դելն ա տա-լիս, համ էլ քրտնում:

— Հն, սաթալջամի դեղ ու դարմանը քրտինքն ա, թե վոր լավ քրտնի, հույս կա, վոր կապրի, — հուսա-դրում էր տատմեր պառավը:

Այս որհնված և գթառատ կինը գլխից վերցրել էր իր միակ ծածկոցը հիվանդի գլուխը կապել և յերկու հիվանդների մեջ կարծես թե բարի հրեշտակ դար-ձել — կամ մեկին եր ծածկում, կամ մյուսին: Պառավի անձնագոհ ջանքերով և ազնիվ հոգացողությամբ Չա-

տոն վերջապես այնպես հեղեղվեց քրտինքի մեջ, վոր կարծես թե վոսկրներիցն էլ քրտինք դուրս ավեց. միայն, ցափն այն եր, վոր յեղկելին հագի շապիկ հա-մարվող պատառոտուն փալասից ավելին չուներ, վոր փոխնորդ աներ, ուստի գթասիրտ պառավն ստիպված յեզավ հանել իր հագի միթանեն և հագցնել նրան, մինչև վոր նրա լանթը կը հաներ և մզելով ու կրակի վրա չորացնելով, կը հագցներ նորից: Պառավի շնորհիվ և աղատարար քրտինքի միջոցով, Չատոյի բախտի անխիղճ մի անգամ էլ շարժվեց և իրան ու իր նարգդին ազատեց մահից: Խորհրդավոր եր այս շարժումն անշուշտ, վորովհետև չեր իմացվում, թե բնությունն ումը խղճաց ավելի. արդյոք յերկու վշտատար լծակիցնե-րէն, թե յերկու անմեղ մանուկներին, վորոնցից մինն իր խանձարուրով մարդու հոգուն ու մտքին մինչև թեթեղհեմի մտւրներն եր առաջնորդում: Կես որին արդեն Չատոն համ աչքը բացեց համ լեզուն և յերախ-տագիտությամբ լցված առաջին անգամ այս սրտա-ռուչ խոսքերն արտասանեց, պառավին դիմելով:

— Նանի ջան, բեր ձեռներդ համբուրեմ, մորս ձեռքերի պես, դու ինձ ազատեցիր մահից...

— Փառք ասժու. լիզուդ վոր բացուեց, էլ դարդ չունես, աստված խղճաց ձեզ, — գոչեց պառավը:

— Հի. ասում ես դարդ չունիմ. բա Խնձորս, նանի ջան, վոր ձեռիցս գնաց: Ա՛խ, — հառաչեց ու լոնց նա, իսկ արցունքներն սկսեցին մեկ մեկ գլորել դեպի ցած:

— Ա՛խ... անխ... լավում էր նաև կնոջ անկողնից, իսկ պառավն ողորմած, շարունակում էր մեղմել ու ցրել նրանց հոգեկան վշտերն ևս:

— Հուսահատվիլ մի՛ք, վորդիք, աստոծ մեծ աս: — Ո՞ւր աս, վոր մեծ աս, սառած ու փետացած գընացի, վոր գեղերիցը մի քանի թուման փող ճարեմ, բերեմ յեզս, ախ, ախպերս, ազատեմ, հաբա ինչո՞ւ փողատերերի սիրտը թրահմը չգցեց, ինչո՞ւ քամակները շուռ տալ տվեց վրես ու ինձ ես որին ու ես հալին հասցրեց, — լուսթյան գրկից նորից բողոքեց Չատուն:

— Ասծու դեմ ճճգոհալը լավ բան չի, վորդի, գիտեմ, նեղացած ես, համա ելի հավատա՞, ելի հուսա՞ ու կտեսնես, վոր նրա վողորմությունը կը հասնի ձեզ. առողջացեք, վերկացեք տեղներիցդ, մատաղ, ճրագ, պատարագ արեք, բալքի մի մեղք ունե՞ք, — խրատում եր պառավը և իր հավատով և հուսով լցնում հիվանդների սիրտը:

— Լավ ես ասում, Նանի ջան. են աս շուտով ջրոխնեք աս լինելու. դե թող աստոծ աղոթքդ լսի, սաղ սալամաթ վեր կենանք ու քո ասածն անենք. բալքի գորթ մեր մեղքի համար ենք սհենց տանջվում, — կարծես զղջալով պատասխանեցին նրանք և խոստացան լսել պառավի խորհրդին:

Թ.

Տի՛ն-դո՛, տի՛ն-դո՛, տի՛ն, տի՛ն...

Սա գլուղական դանգակի առաջին հրավերն եր այն ցուրտ ու բուքին: Այդ հրավերը կարծես ուզում եր հուսադրել, մխիթարել նրանց և կամ մի առ փամանակ խաբուսիկ հմայքով մոռացնել տալ նրանց սըրտերում ամբարված, ծովացած այնքան դարգերն ու ցավերը, այնքան սև ու սախտ որերը:

Անուտում գեղջուկը պիտի մասնակցեր այս մեծ հանդիսին, վե՛ջ թե տոնի իսկական վոգին և նշանակությունն ըմբռնելով, այլ բնազդմամբ, հավատքով և կամ պապական սովորական, ավանդական կարգով.

Մարդու վտաճն ու ձեռը տափից կտրող ցուրտն ու բուքը, կենսական այնքան խեղճությունն ու պակասությունները սակայն, չեյին կարողանում արգելք լինել հավատավոր գեղջուկների «ժամ» գնալուն, քանի վոր նրանք այնպես եյին հավատացած ու համոզված, թե ջրորհնքի կամ Գրիստոսի մկրտության շնորհիվ, գոնե մյուս տարվանից բացվելու են իրանց բախտի դռները, քանի վոր գեղջուկն այնպես եր մթտածում ու հասկանում, վոր, յիթե որհնված ջրից մի քանի կաթիլ տանի իր դաշտի ու տաշտի—հանդ ու արոտի վրա սրսկի, աստուծու խնամքը կը հասնի, առատություն կտա և իր դատարկված մարագը դարմանով, չարգախը խոտով և կամ հորերն ու ամբարները ցորենով կլցվին: Այս հույսերն ու ակնկալություններն եյին ահա այն դաժան փամին դուրս քաշում ամեն մի տանից, ամեն մի խրճթից, ամեն չափ ու հասակի գեղջուկներին, վոր, չնայելով քրքրված, խաղալ դարձած և հազար ու մի լանթ ու փթուրով կարկատած հագուստներին, այնուամենայնիվ, զանգակի ձայնը լսելուն պես, իսկույն խաչակնքում եյին յերեսներին և շարան շարան—սառուցների վրայով ուղղվում եյին դեպի յեկեղեցի, ուր հույսով ու հավատով պիտի կերակրվեյին, ինչպես իրենց պապն ու տատը...

Յե՛կ այսպես, նրանցից յուրաքանչյուրը, թե ձեր, թե պառավ, թե հարուստ և թե աղքատ, մի մի ճվիկ ձեռներին, բուք ու բորանի բերանն ընկած, գնում

եյին մուրագներն առնելու «մուրագ յեթան սուրբ
յարապետից»:

— Տի՛ն-դո՛, տի՛ն-տո՛... տի՛ն...

Յեզ դեռ մեզմ ու խորհրդավոր ձայնով հնչվում,
շարունակվում էր զանգը, վորի յեռանդուն ժամհարը
գյուղի քաղցած ու խունացած տերտերներից մինն էր,
վոր մեծ ագահությամբ յերկար ժամանակ սպասելով
տոնին գալիք գանձանակի մի քանի կոպեկներին,
շաղախված մորուսը տմբումբացնելով, շրթունքներին
հուպ տված խփում էր ու խփում զանգը, ապա թե՛
ձպձպան աչքերովն էլ ժամավորների քայլերը համար-
րում: Թվում էր, թե վորքան զանգի ձայնը խորհրդ-
դավոր ու հավատավորող էր գեղջուկների համար,
նույնքան էլ հասկանալի, ախորժելի և բնորոշ էր «լե-
րեցի» համար. զանգակի տինդոները, կարծես մեկիկ
մեկիկ թվելիս լինեյին տեր հոր իղձերը թե՛ «այ
ժամավորներ, ունեք թե չունեք, այդ ես չգիտեմ,
միայն թե ժամոցս, աջահամբուշրս ու խաչհանեքս բե-
րեք տվեք, էլ ուրիշ վաչինչ...» ինչևիցե, ժողովուրդը
ժամ էր հավաքվում և մեր յերեցը խիստ ուրախ տրա-
մադրության մեջ էր, վորովհետև այդ յերջանիկ որը
նրա փորը հացոտ ու յուղոտ պիտի աներ:

Ժամ շտապողներից մինն էլ անհաջողություն-
ների ձեռքին խաղալիք դարձած մեր յեղբայր Չատոն
էր. սա իր և իր յերախտավոր ազատարար պառավի
հավատովն ու կարծիքովը կարծես թե արգեն դտել էր
իր ծոված բախտի բանալին, ուստի մտածում էր ու
ասում ինքն իրեն:

— Յեթե մի անգամ էլ յես Քրիստոսի քավոր
կադնեմ ու նրա սուրբ խաչը ջրիցը հանեմ, կապված
բախտս անպարձառ բաց կլինի:

Յեզ այս հավատով Չատոն ջրորհներքի որը, իր
խորհրդակից Նարգզի հետ միասին, մի առանձին թե-
թևություն զգալով իր դարդերին, տարորինակ հոգա-
ցողության ու պատրաստության մեջ էր ձգել թե ի-
րան և թե նրան:

Առաջին զանգահարության միջոցին, նա՛ կացի-
նը ձեռքին, հարձակվեց դուրսն ընկած փորը հաստ
մի կոճղի վրա, վորքան ույժ ունեք, շտապ-շտապ
հարվածելով նրան, կրակի համար ձլագներ էր ձեղքո-
տում նրանից, իսկ կինը, չնայելով վրայի ցնցոտինե-
րին, բաց մսին ու անիրավ ցբտին, մարդու ձեղքո-
ած փայտերը ձյունի միջից ժողովելով գիրկը, ներս
էր կրում ու ոջաղի կրակը վառում, թեժացնում, ինչ-
պես այդ յերևում էր նրանց ծխնելույզից բլբլալե
դուրս յեկնող ծխից, վորն այդ որն ամենևին աղքատ
Չատոյի ծխին չէր նմանում. թվում էր թե Չատոն ու
կինն այդ որը մի հանդուգն քայլ են արել. և իմաց-
վեց, վոր նրանք, չնայելով իրենց արգեն ունեցած
պարտքերին, վոր ամեն վայրկյան հրեշի պես կրծում
էր նրանց սիրտն ու հոգին, վճռել են մի ուրախու-
թյուն անել իրենց տխուր, դատարկ ու պատուհաս
հարկի տակ: Նրանք կարծես թե մոռացել էլ եյին
Խնձորին, վոր դեռ էլի բառանչում էր ու վայ տեր
կանչում... այն ժամին:

Յերկրորդ զանգահարության միջոցին Չատոն
անհամբեր կացինը խփեց, կոճղի մեջ պինդ տնկեց,
վերջին ձլանգներն էլ ինքը գիրկն առնելով, արագու-
թյամբ մտավ տուն—իր ողան և հագի պատառոտուն
կարճ քուրքի վրայից հագնելով նաև կարկատած չու-

խան, վորպես «ազիզ որվա հագուստ», դուրս յեկա՞վ շեմքից և քայլերն ուղղելով դեպի յեկեղեցին, յետ նայեց նորից ու կնոջը «հախալ արեց», այսինքն հաստատ պահ տվեց, վոր պատրաստ կենա...

— Նարգիզ ջան, յես ես ա գնում եմ, ամա դու աչքերդ խուփ չանես. մինը տանը, մինն ել ժամի ճամփին պահես ու իմանաս, վոր հազարից մի անգամ մեր տունն երեց, տիրացու ու մարդիկ են մտնելու...

— Գնա, գնա. արխեյին գնա, վոնցվոր ասու՞մ ես, ենպես ել կանեմ:

— Նարգիզ, վողորմի հորդ, չայն ու կերակուրը չըսառցնես, կրկին ու կրկին պատվիրեց Չատոն և հուշ ու հավատը հայոց մեռոնի պես յերեսիցը կաթկաթելեն դեպի «ժամ» գնաց, վոր իբր թե տերտերներից սփոփանք, մխիթարանք քաջալերություն գտնի...

— Առաջ բարի, հար, Չատո աղբեր. ժամ, թե հար, — պատահելով նրան, հարցրեց նույնպես «ժամ» գնացող հարևաններից ՚ի՛նը:

— Ժամ, հրաման քեզ. յս բախտ, տեսնենք. հսոր խաչը ջրիցը յես պիտի հանեմ:

— Դ՛հ:

— Հրաման քեզ:

— Չեն թողնիլ:

Ո՞վ չի թողնիլ. տերտերների ձեռքին չի: Նրանք ինձ խոսք են տվել:

— Դրուստ ա, տերտերների ձեռքին ա, համա պետք ա իմանաս, վոր տերտերի հոգին ել հարուստների ձեռին ա:

— Չե, յես պիտի հանեմ, յես խաչը ջրից հանելու համար պարտքի տակ եմ ընկել:

— Աստված անի, վոր դու հանես, միայն թե դուր ես պարտք արել, պարտքով հանած խաչը դրու՞թյուն չի ունենալ: Ո՞ւմնից ես պարտք արել:

— Խեղանց Խոջիցը:

— Ոհո՛, խե՛ ու խոջա, ի՛նչ լավ են իբար գտել. ամա անիրավը բոլ շահ առած կըլինի քեզանից:

— Չե, ելի սա իսպիով (խղճմտանքով) ժաժ յեկա՞վ, շահը շատ չգրեց:

— Ինչքան վերցրիր ու ինչքան գրեց:

— Իրեք մանեթ վերցրի. հինգ ամիս ժամանակ գրեց. ամառս յերկու որ հուճնձ պտի անեմ, ժամանակը լրանալու որն ել, շահը հետը, հինգ մանեթ փող պիտի յետ տամ, յերկու յել լավ վորցկաճուս:

— Պահ. քու տունը չքանդվի, ա Չատ. ենա կարճ ասա մանեթին յերկու մանեթ շահ ա գրել, ելի:

— Ե՛հ, հարա վոնց անեյի, ճարվում չեք:

— Ճարվում չեք, հանիլ չեյի՛ր, դուր ինչո՞ւ եյի՛ր պարտքակոխ ըլնում:

— Այ տղա, շղկված մարդին ել կասեն թե խի՛ ես տճե արե՞լ, դենա արել եմ, ելի:

— Լավ, ասենք թե արել ես ու անպատճառ ուզում ես խաչը ջրիցը հանել, յանի քի՛չ պարտք կանեյիր, ելի:

— Դ՛չով բանը դրստվում ե՞ր, մի մանեթի չայ ու շաքար, դես դեն եմ առել, յերկուսն ել ես ա, վոր խաչհանեքի եմ տանում:

— Յերկուսն ի՛նչ խաբար ա, տաս շահին հերիք չե՞ր:

— Ըրիցին առաջուց մյուսնաթ արի:

— Յետո՞:

— Չեղալ:
— Ի՞նչ ասեց վոր:
— Ասեց «հազարից մը հատ գատիկ, են ել նավա-
կատիկ»:

— Ե՛հ. դու գիտես... դժկամակությամբ ասաց
նրա խոսակիցը, վոր փոքր ինչ կարդացած մարդ էր,
և սորանով ել ընդհատվեց նրանց խոսակցությունը,
վորովհետև արդեն մոտեցել էյին յեկեղեցու շէմքին,
ուր վեր առնելով գլխարկները, յերկուզածությամբ
մերձենալով դրանը, մի քանի ջերմ համբույրներ դրոշ-
մելով վորմերին, ներս մտան մըմնջալով:

Արդարև, խեղճ Նարզիզն «աչքի մինը հազար եր
շինել»—նա անհանգիստ յեղած ու անդադար դուրս ու
տուն եր անում. այսինքն՝ բոբիկ վոտքերով մի առժամա-
նակ ձյունի մեջ կանգնում, նայում՝ ծկրակում եր «ժա-
մի» ճամբին, դողդողում, սառսուռ գգում, սրսրթա-
լե ներս գնում, վոտքերը տաքացնում կրակի վրա,
նորից դուրս գալիս և այսպես անվերջ շարունակում՝
լի հավատով սպասելով, թե այն է վորտեղ վոր է, Չա-
տոն մեռոնաթաթախ խաչը ձեռին «յերեցնելին ու տի-
բացունելին» բերելու յե, վոր իրանց բախտի չար վո-
զիններին տանից քշեն, հալածեն...

Բայց վորքան յեղավ գեղջկուհու զարմանքը, ինչ-
պես փշրվեց նրա հույսը, յերբ, յերկու ժամվա չափ դուրս
ու ներս անելուց հետո, տեսավ, վոր Չատոն գալիս է
ձեռնունայն, առանց խաչի, առանց տերտերի ու խա-
լիփի, և վերջապես, առանց հույս ու հավատի, շփոթ-
ված ու վրդովված, անիծելով և հայհոյելով:

— Ա՛խ: Յերանի թե թուրք լինեյի, յերանի թե
ջուղ ու նասրանի ծնվեյի...—աղաղակում եր Չատոն

և սառույցները կոխ տալով, գալիս եր դեպի վեր այն-
պես արագ, վոր կանգնեցնել անկարելի յեր, այնպես
հերստտած, վոր հետը խոսել չեր լինում. նա, բարեպաշ-
տությունը մի կողմը թողած, ինքնամոռացման մեջ
ընկած, այնպիսի անեծքներ ու հայհոյանքներ եր հը-
նարում, վոր թերևս իր կյանքումը լած ել չեր նույն
իսկ ամենափուշ և վայրենի մարդուց...

— Չե, չե. յես թուրք եմ դառնալու, յես այսու-
հետև ել ասուն հավատալու չեմ, ել ասելու չեմ թե
յա՛ Քրիստոսը կա, յա՛ պատարագ, յա՛ մեռոն, յա՛ խաչ,
յա՛ թե չե հոգի ու հավատ. վորտեղ նստեմ, ասե-
լու յեմ՝ չիմ սուտ են: Սըհե բան կլի՞. դրանք երեցնի
յե՛ն, դրանք Քրիստոսի փոխանորդ ե՛ն, հե՛. չե, չե,
վո՛չ հավատամ, վո՛չ. դրանք դժոխքի սատանաներ են,
դրանք աչքակապներ են, դրանք հարուստների դո՛ւ են,
դրանք, դրանք...—կարկտի պես վրա յեր տալիս նա
և հետգհետե կրակի պես վառվում, բորբոքվում:

— Ա՛, Չատ, ա՛ Չատ... Խչատո՛ւր, եհե՛ Խչատո՛ւր,
աղա մանրմ չե՛ս...

Աջ ու ձախից ձայն էյին տալիս նրա յետեից, վոր
մի բան իմանան, մի բան հասկանան անակնկալ դեպ-
քից, բայց ո՛ւմնից: Չատոն այնպես եր կրակվել, այն-
պես վերավորվել, վոր նույնիսկ յեթե ամպ ել տրաքեր
նրա ականջին, ելի չեր լսիլ բոլորովին: Նա հայհոյանքի
պաշարը դեռ չսպառած. վերջապես ծածկվեց իր ողաչի
սրահի տակ և կարծվում եր, թե դրանով ել պիտի
վերջանար կոսեղիա՛ն: Բայց ահա նա մի պղինձ դուրս
բերելով այնտեղից և հարևանի շներին ձայն տալով
զվոցով, միջի կերակուրը շուռ տվեց նրանց առաջ, պը-
ղինձը մի կոմղը գլորեց, ներս մտավ նորից, մի չայ-

դան և յերկու շիշ ել դուրս բերեց, իրարով տվեց, խփեց, փշրեց, գինին ու արաղն ել գեն ածեց. և, դրանով միայն կարծես այրված սիրտը հովացնելով, ներս մտավ ու ել դուրս չեկավ:

Շները վրա թափված լափում ու լիզում եյին թափված կերակուրը, իսկ հանդիսատես գյուղացիները անվերջ ծիծաղում էին այդ արարմունքի վրա:

Չանգի ու յերգի ձայնն արդեն դադարել էին յեկեղեցում և բոլոր ժամավորները ճվիկները որհնած ջրով լցրած, դուրս գալով այնտեղից, մեկ մեկ ցրվում էին գյուղամիջերում: Դուրս էին յեկել քահանաներն ու տիրացուներն ևս, և մի լիքը լիքը մարդու հետ շարժվել դեպի մի յեվրոպականացրած շինություն, վոր կառուցված էր մի ընդարձակ այգու մեջ և վորը գտնվում էր գյուղից դուրս վարելահողերին կից: Շինությունը պատկանում էր Թուխինանց հարուստ Թորոսին: Այս Թորոսի ծխնելույզից ծուխն ամբար-ամբար էր դուրս թափվում և խորովածի ախորժեղի խնջմնջահոտը շուրջը տարածելով, կարծես թե գյուղական բոլոր պնակալեզներին դեպի իրեն հրավիրում, իսկ Չատոյի ծուխն ընդհակառակն, նվազում էր ու նվազում հետզհետե:

Այս միջոցին Չատոյի անակնկալով հետաքրքրվող գյուղացիները, նրա տանից ներքև, կանգնեցրել էին յեկեղեցուց տուն վերադարձող այն գյուղացուն, վոր պատարագից առաջ Չատոյի հետ խոսակցելով «ժամ» էր գնացել և հարցնում էին:

— Խնամ Զան, Խնամ. ողորմի հորդ, մի ասա տեսնենք Չատոյին են ինչ գյուղա դիպավ, վոր նրհե կրակված ու կծրկոթած գնաց կոկալը (ողան)

պրծավ, յետո ել, եսթավուր սովի տարին, յեփած կերակուրն ու հացը դուրս բերեց նհախ տեղիցը ու շընքի առաջը պրանեց...

— Յանի ասիլու ան, վոր ասեմ:

— Հան, հան, մյուննաթ յենք անում, վոր ասես, թե ո՞վ էր նրհե երել խորովել են խեղճ ու նաչար քյասիբին:

— Ասում եք ո՞վ:

— Հրաման քեզ:

— Մեր ջարդված երեցներն, ո՞վ:

— Երեցներն. վճնց:

— Վճնց, նհենց վոր, խեղճ քյասիբին առաջուց խելքից հանել են, թե անաջողութիւնդ խաչիցն ա, մինչև վոր խաչին պատիվ չտաս, խչըհանեքով ու խչըհամբուրով ջրիցը չհանես, ծուված բախտդ չի գըզվիլ. նա ել գնացել էր մեկն երկսով պարտք արել, փող վերցրել, արաղ, բրինձ, գատ առել, ու, յերկու մանեթ էլ բռնումը հուպ տված յեկել ժամ, վոր Գրիստոսին քավոր կազնի, ամա չեղավ, ելի:

— Յանի վճնց չեղավ:

— Ե՛հ. բանը գլխիցը պտես ասիլ, վոր բան դուրս գա, ե: ժամից աղաք յես ու Չատոն խոսելով գնացինք ժամ. յես իմ տեղը կանգնեցի, նա խալխի միջով, ձղոն-ձղոն անելով, առաջ կազնեց ու խիմի ապտով սկսեց աղոթք անել, ծուռը դնել, յերեսը դատով սկսեց աղոթք անել, ձուռները վերև բարձրացնել, մի խոստափերը քսել, ձեռները վերև բարձրացնել, մի խոստով չտեսնված հրեշտակ դառնալ, մինչև վոր մեռնը քով թափելու ու խաչը ջրիցը հանելու վախտն եջուրը թափելու ու խաչը ջրիցը հանելու վախտն եկավ: Մեր խալխն ել գլխի ընկնելով, վոր խաչը Չատոն պտի հանի, սկսեցին լաղ անել—ծիծաղել: Մինն

ասում եր՝ «Ինչի՞ իրան հալոքը չի կենում», մինը թե՛ «Ինչի՞ իրան յորդաննուգյորա չի վտար մեկնում», մյուսը թե. «ախր խաչքավորութունն ինչ քյասիբի խարջ ա, ինչի՞ իրա չափը չի՞ ձնանչըմ, ինչի՞ ա գընացել մեծամեծների տեղը կազնել»։ Եստես հազար ու մի փլան ու բեհման։

— Վերջը, վերջը։

— Շատ խայտառակ բան։

— Ի՞նչպես։

— Տեր հայրերը յերկու կողմից ել ուզում եյին շահվել, ամա չեղավ։

— Վհնց թե յերկու կողմից.

— Նհենց վոր, յերբ խաչը հանելու վախտն եկավ, Չատոն միամիտ առաջ մանչեց, իրեսին խաչ հանեց, ձեռը մեկնեց, վոր հանի, տերտերներից մինը մեկնած ձեռը յետ քաշել տվեց ու ասաց. «Յավվաշ, թող առաջ աղեն հանի, յետո դու»։

— Վահ. քանի՞ խաչ եր վոր. յետո։

— Կասեմ, համբերի. հետո թուխնի թուր՝ մեծ թափանը ցցած, բուղի ուսի պես վիզն ուտցրած, հպարտ հպարտ յերեք մանեթ ըրիցի բուռը կոխեց ու Քրիստոսի խաչը նա հանեց ջրից։

— Ե՛, բա վոր նա հանեց ջրից, ել ի՞նչ մնաց, վոր Չատոն ել հաներ։

— Քար ու քացախ նրանց ջանին ու արեին. ձեռաց վազ տվին, չը գիտեմ վորտեղանց վորդի, մի՞ ժանգոտ յերկաթի կտոր ել բերին պղինձը կոխեցին, թե «ես ել դո՛ւ հանիր»։

— Վահ, վահ...

— Հարս. խեղճ քյասիբին ենպես սաղ սաղ ըս-

պանեցին, ամոթու չորացրին ենքան ժամավորների և դոստ ու դուշմանի միջին, նրա հավատի հետ խաղացին։ Խեղճը մին կարմրեց, մին սփարթնեց, մին դեղնեց ու մոլորվեց, մեկ ել կեծակի տվածի պես վառվեց ու հայհոյելով են եր, վոր դուրս թռավ ժամից։

— Տեսանք, մնացածն ել հարկավոր չի ասել. տեսանք. թե մեր հոգևոր հայրերը քյասիբի սիրտն ինչպես եյին կրակել ու դարդերը նորոգել.— վրեժխնդրությամբ լցվելով, ասացին լսողներն ու բաժանվեցին պատմողից, իսկ այդ միջոցին Չատոյի հավատը շահագործող սուրբ հայրերը, նրա անմեղ զգացմունքների հետ խաղացողները, նրա բախտի անիվը քարին տալով, իրենց ուխտապահ քոռ ու քաշալ տիրացուններով հարուստ խաչքավորին փքեցրած՝ շարականներով, առո՞ք փառո՞ք առաջնորդում եյին դեպի նրա այգու ընդարձակ ցանկապատով շրջապատված յերկհարկանի տունը։

ԺԱ.

Չար աստղի տակ ծնված Չատոն ու Նարգիզը, Խնձորի դարդով սրտները դամղված, մարդկանց վարմունքներով հույս ու հավատից զրկված և իրենց խաբուսիկ բախտի անիվը հեծած, մի ձմեռ ել անցնելով, կամաց կամաց մտան 1895 թվի գարունը։

Այս գարնան մի շնչասուն առավոտ, ծիրանինների ու դեղձենիների ծաղկով փթթելու ժամանակ, յերբ այգիների ու հանդի ամեն մի թփի տակից կապույտ մանուշակն ու խնձաղին (ձնծաղիկն) ավետարեք նո-

բահարսներին նման քնքույշ գլուխները նազով բարձրացրած, հեղիկ հեղիկ աչիկներով վողջուենում եյին իրար ու շոյշոյում, գրավում և սքանչացնում նայողին. յերբ լանջերում ու մարգագետիններում կանաչների մեջ գառնիկներն ու ուլիկները մայում, մկրկում եյին իրանց մոր սիրով ու ցատկոտում անվերջ. յերբ մեղունները փաթաթվելով անուշաբույր ծաղիկներին, դեղին փողին վոտիկներին թռչում եյին դեպի փեթակ և կրկին վերադառնում ծաղկի, այդ նույն ժամին բոլոր գեղջուկներն ել, ձմրան վերջում գետնի խորքերից թերթած յեղած մըջուենների պես, աշխատանքի եյին շտապում աջ ու ձախ:

Պապն ու ամին տրիպն աստմներին արանքն առած, և կամ գոտիները խրած, ակը ջուր ընկած վազներին սուր հատիչներով վերքեր հասցնելով, և վերքերից արցունքի նման կաթիլներ վազցնելով, այգիներում մատն եյին հատում ու ցցած ձողիկներից արիպով կապկապում. իսկ նրանց սիրասուն թռուսիկները շուրջները թռչկոտալեն ծալամ ժողովում: Աշխատանքի հասած յերիտասարդներն ել գանազան գործիքներով հանդերը քաշված, վոմանք հորիքները կոտնկների շարքերի պես գուլթանների ու արորների առաջները ձգած, վարում, ցելում ու ծրում եյին կրաման-կրաման, վոմանք վարածներում ազոաջներին ու այլ սերմնագող թռչուններին քարեր նետելով, սերմ եյին ձգում փեշ առ փեշ. վոմանք ել՝ շաղի պես քրտունքն յերեսներին պրպտալով ցաքուտներում, չափարների համար փշե քաշաններ եյին պատրաստում: Վառ աշխատանքի այն վոսկի ժամերին սակայն, յերբ գյուղի ճնճուկներն ու հանդի ծաերն անգամ խոտն ու ծեղը

կտուցներին ծվծվալե բուն եյին հյուսում, պարապ եյին մնացել միայն տանուտերն ու տերտերը, վորոնք գյուղամիջում, խարխուլ յեկեղեցու ստվերում, անհոգ, զով-զով և անդարգ զրույց եյին անում ու անհամ-անհամ քրթում ու քուքում:

Այն միջոցին այն յերկհարկանի տան և ընդարձակ այգու ցանկապատից դուրս մշակների մի շարք ել յերևաց: Հենց առաջին հայացքից նույնիսկ անծանոթ, մարդն ել իր գուշակեր, վոր այգին մի հարստի կամ հարստահարողի այգի յե: Տան և այգու տեր, յերբեմն չարչի, յերբեմն դուքանչի և վերջն ել կապալառու թուխնանց թորոսը հարստության շնորհիվ քաղաքների և քաղաքացոց հետ շփվելով, իր գյուղական կամ պապական տարազը յիվրոպականի փոխած, բայց բոխ և անտաշ գյուղացիներից մինն եր: Արխալուղի վրա սյուրտուկ հագած այդ ցուցամուլ գյուղական տիպը, բեխերը յուղած, տաճկական Ֆեսը թեքը դրած, տերվորմեն ձեռին, խիստ փքուն ու հպարտ, հպարտ, անց ու դարձ եր անում մշակների առաջ և դաժան-դաժան աչքերով գրողի նման հսկելով նրանց, անհանգիստ և անողորմ կերպով բանացնում եր նրանց. այնպես վոր, դժվար թե կարողանային նրանք քիթները սրբել:

Բանվորները բոլորն ել այն աղքատ ու անճար գեղջուկներն եյին, վորոնք, ձեռները պակաս ժամանակ, թուխնանց թորոսի խանութից մի քանի արշին չիթ ու կտոր եյին վերցրել ապառիկ հաշվով և այսոր վոջ թե այն ապառիկ, այլ տոկոսի հաշվումն եյին բանում նրա համար: Մշակները շարված եյին բախտը կապված Չատոյի վարելահողում և այս հողի մեջ՝ աղայի այգու յերկարությամբը փոսեր եյին փորում:

Չատոյի հողն անիրավացի կերպով պիտի դաժ-
թեր թորոսը և իր այգին ելի ընդարձակեր: Չատոն
մի ժամից ավելի անհամարձակ պտտվում էր նրա
շուրջը և աղաչում:

— Աղա ջան, մեղք եմ, յեզս հո տարար, արի
մրուսթ արա, հողս զավթիլ մի, սրանով եմ յերեխեքս
պահելու...

Բայց աղան վոչ միայն չէր խղճում նրան ու չէր
ամաչում, այլ ամենևին չէր ել ուզում յերեսին նայել:
Թիկունքը շրջելով վրան, քամակով էր պատասխանում
նրան և այն ել՝ մոլեգնելով և նոր ու խայտառակ
սպառնալիքներով զարհուրանքներով անարեկելով նրան:

— Կորիք, ըռնդ ըլիք գլխիցս. շան պես քիչ
մոմա, թե չե մշակներին կըհրամայեմ, վոր փոսերը
հողիդ կիսոցն անցկացնեն...

— Աղա, մեղք են մանուկներս, դու ու քու աս-
տոծը, ինձ մի գրկիլ մի կտոր հողից:

— Հը՛մ, հարամգաղա սարսնդ. մեղք էն, տար
ջուրն ածա. ո՛հո, հո, հո, թե վոր քու մանուկները մե-
ծացան, աշխարհն ափաթ են անելու ելի...

— Աղա, թե ուզում ես, ինձ շուրը գցիր, յերե-
խանքս պետք ա խնայես...

— Կորիք, լիբբ:

Ասծու սերն, աղա մյուսնաթ եմ անում, վոր
բանս զիվանի չզցես...

— Ինչպես, ինչպես, ինչ ես հաջում, զիվանի.
հահ, հահ. թե աստոծ կը սիրես, զիվանի անումը տալ
մի, թե չե լեղիս թամամ կպատովի ու կը մնամ անձար.

Կուշտ կուշտ ձիծաղելով ու բեղերը սղալելով
հեգնում էր թորոս աղան և դառնալով մշակներին ա-

սում. «Փորեցեք, անգաջ միք դնիլ, ավելի յետ փորե-
ցեք. սրա հերն անիծած, յես ելի խնայելու էյի, յերբ
վոր իրեն վոչինչ տեղովն ինձ զիվանով ա վախեցնում,
յետ փորեցեք. թող դնա տեսնեմ են վո՛ր զիվանն ա
սրա գնչին մտիկ անելու», ապա Չատոյին դառնալով
և ձեռքով իր գրպանին խփելով, ավելացնում էր:

— Ե՛յ, զիվանն ես ա, ա՛յ, ես...

— Աղա, վերջին անգամ ելի եմ աղաչում, մի
անիլ, ո՞ջարարին մի կապիլ. առաջինը յես քեզ մյուսն-
աթ եմ անում, յետո, թեկուզ և մեռնեմ ել, թողալու
չեմ, վոր դու, քո բազը մեծացնելու համար, իմ տափը
դավթես. ես ել յեզս չի, վոր շահը շահի վրա յեկար ու
խլեցիր և աչքներիցս պեծ ու կրակ թափելով քշեցիր,
տարար. պավական էր...

— Հը՛, հը՛. ըռադ ըլիք, կորիք, թե չե ես փոսերից
մինի մեջ վրագլխիդ սազ սազ թաղիլ կը տամ, —ասում
էր աղան ու բայդուշ աչքերն աջ և ձախ շուռ ու
մուռ տալով, խեթմեթատում, իսկ Չատոն շարունակ
կրկնում էր նույնը թե՛ «թողալու չեմ, վոր քու բազը
մեծացնելու համար իմ տափը գողգանդու խլես ու իմ
յերեխեքը սոված թողաս»:

Այս հետգհետե համարձակություն ստացող կրկի-
նողություններին աղան այլևս չը համբերեց և մի ուժ-
գին ապտակ զարկելով յերեսին, դուրս քշեց նրան իր
սեփական հողից:

Չատոն ապտակն ստանալով, առաջին անգամ ու-
ժերը ժողովեց, վոր ինքն ել խփի, պատասխանը տա,
բայց տատանվելով թողեց այդ համարձակությունը,
կտորվեց և հուսահատված, ձեռնուռնայն ու փշրված սըր-
տով, յերեսը դարձրեց դեպի գյուղամեջ, դեպի աստու-

ծո դատարանի, արդարութեան տաճարի գուռը, վորի պատերի սառն սովերում ընկերակցաբար իրենց զրույցներն ու հանաքները դեռ շարունակում եյին պորտաբույծ, տգետ տերտերն ու տանուտերը:

— Ե՛... վոր գնում եմ, դիվան կա՞մ, — համ գնում եր, համ ինքն իրեն բացականչում Չատոն:

Այս թունալից և լիովին հուսահատութունը ու լքնութուն պարունակող խոսքերով բացականչելով Չատոն, հանկարծ կանգ առավ կես ճանապարհին և փոքր ինչ մտածելով, կարծես ուզում եր հետ դառնալ՝ կամ վրեժ առնել թուխիի տղից, և՛ կամ մեռնել իր վտանակոխ յեղած, իր հարստահարված սեփականութեան ու պատվի համար, նորից հուսախաբւելով, թե մի գուցե դոնե այս անգամ խղճան իրեն, ու առանց արշունահեղութեան պատճառ դառնալու իր արդար գատը պաշտպանեն, նորից, բայց ավելի արագ քայլերով՝ շարունակեց ճանապարհը՝ շարունակ նույն թունավոր միտքը կրկնելով և հարց տալով ինք իրեն թե՛ վոր գնում եմ, դի՛վան կա՞մ:

Թուխիի տղի հեզնաբար և սպառնական խոսակցութունը, հայհոյանքները և ապտակահարութունն ու Չատոյի հեծեծանքը ճանապարհի շուրջը փոված այգիներում աշխատող գյուղացիները ուշադրութունը վաղուց եյին դարձրել կատարվող անարդարութեան, անիրավութեան և վոճրագործութեան վրա, բայց միջոց չունեյին ոգնութեան հասնելու հուսահատութեան խորքն ընկղմված իրենց յեղբորը, վորովհետև հարստութունը իր վոճրագործ գիրկն եր ժողովել գյուղի արգարադատութեանը: Փողն ու կաշառքը կուրացրել եյին բոլոր գատավորներին, իսկ խավարը, տգիտութունը

պաշարել եր գյուղացիները ընկերական գիտակցութեանն ու պատվասիրութեանը:

Գյուղումը վոչ ուսումնարան կար, վոչ կրթարան և վոչ գոնե մի լուսավոր հոգևորական, վոր կատարելով և՛ իր պարտականութունը, և՛ համաձայն քրիստոնեական բուն վոգուն, ալիտարանական ճշմարիտ քարոզութունով հեղափոխեր իր՝ Վոգովրդի միտքն ու հոգին և վրեժխնդրութեամբ լցներ նրանց սիրտը դեպի անաստված հարստահարիչները: Յեղած հովիվը վարձկան եր ու տգետ, իսկ գյուղը մոռացված՝ մոռացնացված աշխարհի մի հեռու, մի խուլ անկյունում:

Թվում եր թե Չատոյի բախտի խաղին, մարդկային անձեռնմխելի պատվի վտանահարվելուն. ապտակահարվելուն և ծաղրվելուն հանդիսատես համագյուղացիների մեջ բարի զգացմունք, բնական կարեկցութեան նշույլներ կային դեպի անարգվողը, սակայն այն թույլ կարեկցութեան խթանը, շարժիչ մեքենան, — գիտակցութունը չկար, բացակա լեր, ուստի տգիտութեան բոլոր դառնութունը հաջորդաբար վայելում եյին՝ մի որ Չատոն, մյուս որը Մեջլումն ու Սահակը և շատ ուրիշները, և այսպես միշտ և շարունակ, մինչև վոր, ուսման ու կրթութեան շնորհիվ, կը բացվեր խեղճ գեղջուկների աչքը և կը փարատվեր մշուշով պատած նրանց անմեղ մտքի խավարը, ուր գիտակցութեան լույսը դեռ մուտք չէր գործել:

— «Վոր գնում եմ, դի՛վան կա՞մ»:

Այս սիրտ փշրող հուսահատական դանն, աղի ու լեղի բողբոջ քյասիբ Չատոն մինչև տեղ հասնելը հազար ու մի անգամ շնջալով, գնում եր խիստ տխուր, խիստ մտահոգութեամբ, սիրտը կրծոց տանջողութեամբ:

Գնում եր—հոնքերը տոթած, արագ ու վրդովված, և վոր անտանելին եր, ապտակի անարագ դրոշմը—Թուխինն աղի հարվածի հեռքերն յերեսին, կապտացած ու արնաթախ եր գնում:

— Չատո՛, Չատո՛, եհե Չատո՛...

Այ տղա, ինչի՞ ես տհե առնված, շփոթված հարաքյաթ անում, ի՞նչ ա պատահել...

— Չատո՛, Չատո՛...

Այգիների չափարներից գլուխները դուրս հանած, հետաքրքրությամբ և անհամարձակ կարեկցությամբ, յետեից ձայն եյին տալիս բանվորներն ու մշակները, բայց Չատոյին զիպած հարվածն այնքան ծանր ու դառն եր, վոր կարծես ականջները ծանրացել եյին և նա վոչինչ չեր լսում ու տեսնում իր շուրջը:

— Այ տղա, Չատո՛, եհե Չատո՛...

Դարձյալ իզուր եյին բարձրացնում նրանք իրենց ձայները, Չատոն իրեն սրտի ալավոջն յեղած, ելի համ քայլում եր, համ հազար ու մի յերրորդ անգամ կրկնածը կրկնում:

— Վոր գնում եմ, գիվա՛ն կա՞»:

Նա հասավ յեկեղեցուն, գլխարկը վերցրեց և նախ համբուրեց յեկեղեցու պատը, ապա մոտենալով տեր հորը, արյունոտ ու քրտնքոտ շրթունքներով համբուրելով նրա անարժան աջը, գլուխ ավեց տանուտերին, դողդողալով կանգնեց նրանց առաջ և այրվելով ու մորմոքվելով արավ իր աղիոդորմ գանգատը:

— Տեր հայր ջան, ախր սհե անաստո՛ծ, սհե անխղճմտանք բան կըլի՞. ես չի՞ իմ հալը. վոտս, գլուխս ու դոշս բնց, մի հալավ ելա չունեմ, վոր լաշս ծածկեմ. հու տեսնում ես, աչքից հեռու չեմ, փառք ասծու:

Յես ինչի՞ տեր եմ, վոր յեղած-չեղածս միայն յերկու որավար հողա, ես ել մնի կեսը Թուխինի աչքածակ տղեն ա կտրում տանում: Բա յես ինչո՞վ պիտի ապրեմ, ինչո՞վ պտի տամ վզիս վրա արճի՞ճ դառած խարջ ու պարտքը... մեղք չեմ:

Այսպես, աղի արտասուքով հեղեղելով արյունոտված ու այրված այտերը, կրակելով ու փշուր փշուր անելով իր սիրտը, իր տանջված ու դառնացած հոգին, արավ իր բողոքը նախ՝ իր հոգևոր հորը, հուսալով վոր նա կհովանավորի իրեն՝ վորպես մի նետահար յեղած ու վշտահար և անոգնական զավակի: Բայց ի գո՛ւր, տգետ տերտերը նույնքան անզգա մնաց, վորքան տանուտերը, իսկ յերկուսը միասին, ինչպես յեկեղեցու պատի այն քարերը:

— Ինձ ո՛ւր ես գանգատվում, վորդի, գիտե՞մ չես, վոր ես գուխավճի եմ: Եղ գործը սրան գործն ա, գանգատդ սրան արա...

— Հալքաթ վոր դրան գործն ա, միայն թե քու խաթրն ավելի կընդունի, տեր հայր ջան...

— Չե, վորդի, յես մարմնավոր գործերին խառնվում չեմ, եղ սրան գործն ա, սրան գանգատվիր,—կըրկնեց տերտերը, վորին նա, յերիքովի ճանապարհին ավագակների ձեռքն ընկած վիրավորվածի նման հայր գոչելով, այնքան հուսով սպասում եր, թե մի կերպ կմխիթարի իրեն, մի կերպ կմեղմացնի իր սրտի այնքան դառնությունը:

Բայց իզուր հուսախաբուցյուն. ուր եր են սուրբ աջը, վոր բռներ են խաչը: Ընդհակառակն՝ տեր հայրն իր անտարբերությամբն ավելի լքացրեց Չատոյին, քան Թուխինի տղեն, իսկ տանուտերը, վո՞չ միայն ա-

մենեին չգլխաց նրան, այլև աննկարագրելի ու քարացած սրտով կարկտի պես քարեր շարտեց խեղճ մարդու սրտին:

— Քյոխվա ջան... Հոդս... Հոդս...

— Ձենդ կտրիր, ախմախ հարամզադա՝ մի թիզ հող ա, հո մի որավար չի:

— Մի թիզ ա, դորթ ես հրամայում, ամա իմ միակ հուսատեղն ա, աղաչում, խնդրում եմ, թողաս վոչ վոր խլի, թողաս վոչ, վոր ինձ անբախտացնի...

— Կորիր, ըռնդ լիր գլխիցս. քեզ պես մի անպետքը մարդու համար յես կարալ չեմ, վոր գեղի պետքական ու լավ մարդկանցից մեկի քեփին դեպչեմ: Մարդն արին-քրտինք ա թափել, հարիրներ ծախսել, Հնդաստանից ել ծառ ու տինկ բերել տնկել վոր ինչ ա քու մի թիզ հողի խաթեր պտուղը չափարի դրսիցը խալխը թափ տան, ուտե՛ն:

— Քյոխվա ջան, նրա ծառերի ձղները դրսի վրա աստոծ ա յերկարացրել, իմ մեղքն ինչ ա, վոր հողս խլի:

— Հողը թագավորինն ա, քունը չի. ում ուզենամ նրան կտամ. իրավունքն ինձ ա տված:

— Վա՛, եդ ի՛նչ ես հրամայում, ա՛ վոտքիդ մատաղ. թուխինի տղեն քիչ հող ունի՞, վոր նրան տաս. հողն իմն ա, աղքատը ես եմ ախր, նա զոռզան զոռ յեկել, խլում ա:

— Աչքիդ պտուղն ել ա հանում, խի՞ ես աղքատ, խի՞ ես անկյալ:

— Աղքատությունն ախր աստոծ ա տվել, յես ի՛նչ մեղավոր եմ:

— Մեղավոր ես...

— Թող քու ասածն ըլի, քյոխվա ջան, գիդամ, վոր շատերին ես վողորմացել, քու ասծն սերը, ես մի անգամն ել ի՛նձ վողորմա. ինձ պահիր. մերկ ու մեղք յերեխանցս մրվաթ արա, թողալ մի, նա հարուստ մարդ ա, զոռ շատ ունի, կարլմ չեմ աղաքին կաղնեմ, ուժս ախտըմ չի, ու հողս զոռզան-զոռ զավթում ա, տունս գլխիս քանդում ա:

— Ասեցի վոր, քանի պատիվդ վրեդ ա, քաշվիր գլխիցս, քիչ գահլաքյուշտ արա, թե չե, վեր կը կենամ, ու ես ձեռիս մաթրախովը մեջքիդ կաշին մի՛ն, հի՛նգ, խորխահան կանեմ:

— Քյոխվա, արեիր մատաղ, քյոխվա, յերեխեքս մեղք ու կրակ են:

— Ադա՛, տո քյոփաողլի, քեզ ռվ եր ասում, վոր մի գլուխ հենց յերեխեքդ շատացնես...

— Քյոխվա, մրվաթ արա...

— Ա՛յ, ա՛յ. իմ մրվաթն ես ա, ա՛յ...

Տեղից վեր թռչելով, հարձակվեց անգթաբար և սկսեց շրջափակել ու վրա-վրա մտրակահարել, իսկ նա՝ անառձ մարդ գազանից, գյորայից թեկերով պաշտպանվող թռչունի նման, ձեռները մտրակին դեմ անելով՝ յետ-յետ գնաց, քարոյն ընկավ ու մեջքի վրա վայր ընկավ, վերկացավ նորից և, սաստիկ հուսահատությունից ինքնամոռացության մեջ ընկնելով, սկսեց արհամարել նախկին աղաչանքներն ու պաղատանքները և ասաց վճռական կերպով:

— Տեսե՛ք, յես ես ա գնում եմ հողիս վրա արին թափեմ, ել հույս չկա՛, համբերութիւնս ու աղաչանքս ել հատավ...

— Ի՞նչ, ի՛նչ. արին ես թափելու. այ քեզ նոր արին, ա՛յ... ա՛յ...

Շրը՛խկ, շրը՛խկ, նորից մտրակահար անելով,
քրքրեց միսը բաց աղքատին և վաճառելով յեկեղեցու
բակից, դարձավ տեղը, և պարծեցավ.

— Շան տղա. յերկու շաբաթ ա ամեն կողմից,
թե սուզյա, թե քյոխվա, ասում են մի թիզ հող ա,
ձեռը քաշիր, թող վար մարդի ծառերը չփչանան, սա
յեկել ա համարձակ-համարձակ հաջում կշտիս թե՛ «ա-
րին կանեմ». ձեռիս շորվեն խմեցիր. դե հըմի դեհ
չլինքք քորելով, վորտեղ ուզում ես, գնա...

Այսպես վերջացրեց իր դրաման տանուտերը, իսկ
քահանան այդ սրտաձմլիկ տեսարանին Չաքարիայի
լուռթյամբ իր հանդիսատես լինելը բավական չհամա-
րելով կարծես, դեռ գովեց ել նրան, դեռ շոյեց ել նը-
րան:

— Շատ լավ արիր, աչքն ել հանեցիր. պետկա
իրան թայ ու թյուշ ճընանչի. քյոխվի ու սուզյի
խոսքն ել վոր չի լսում, ել ձևը պտի լսի:

Այսպես վարվեց նաև տեր հայրը իր հարստա-
հարված զավակի հետ:

ԺԲ.

«Բա վոր ասըմ եյի թե դիվան չկա. ախ»...

Մի անգամ ել կրկնեց Չատոն այս ավերիչ ու
գարշելի «դիվան» խոսքը և սրտոտ ու վճռական քայ-
լերով ուղղվեց դեպի իր հողը, ուր այժմ Թուխինի
տղեն տերվորորմիայի փոխարեն ծխախոտը ձեռին,
ծխելով և բերանից հպարտությամբ աջ ու ձախ ծուխ
արձակելով, ծանր քայլվածքով շրջում եր չափարի

յերկայնությամբ. բայց թվում եր թե մի նոր և դի-
վական խորհրդավորություն կար նրա այդ կասկա-
ծավոր քայլվածքի մեջ, թվում եր, թե նա հողի այդ
կտորը խլեչով չի բավականալու, այլ մի նոր աղետ և
բերելու Չոբանանց Չատոյի ընտանիքի գլխին: Նա,
կարծես հոգիառի կերպարանք ստանալիս լինելը հետզ-
հետե, իսկ Չատոն գալիս եր համարձակ, հայհոյելով,
Թուխինի տղի բոլոր գաղտնիքներն ու կեղտոտու-
թյունները բարձրաձայն հրապարակ հանելով և մի ծանր
դագանակ ել ուսին դրած:

— Յես ուզում եյի կարգին, դիվանով բան բըռ-
նեմ, յերբվոր դիվանն ել միշտ անարդարութին ու
անիրավութին ա անում, յերբվոր միշտ աղքատի պա-
տի՞ն անորեն հարստի վոտի տակն ա տալիս, յերբվոր
առանց կաշառքի դատաստան չի կտրվում, ես ա
հրես սաղիգեղը կը տեսնի, վոր հերիք ա համբերու-
թինս, վոր ես պատիվս մահից բացրն եմ դասըմ...

Այս վոգեորիչ և անակնկալ գիտակցությամբ ու
վստահությամբ գյուղամիջի ձորն իջավ նա, իսկ գյուղ-
դացիք սկսեցին կես մի հանաքով ու սրախոտությամբ
և կես մի ել ցավակցությամբ դեպի նա և ատելու-
թյամբ դեպի Թուխինի տղեն, խոսել ու քննադատել
վերջինի անիրավությունը: Խեղճ Չատոն յերբ առա-
ջին անգամ համարձակ, արագ-արագ և աղիողորմ կեր-
պով սկսեց անխիղճ Թորոսին հայհոյել և տանուտե-
րին քննադատել, նրանցից մինը իր այս անմեղ նը-
կատողությամբը բավական ծիծաղ և զվարճություն
պատճառեց այգիներում բանողներին:

— Տղերք, խեղճ Չատոյին յեկեղեցու դռանը
մաթրախ ա դիպել, հա,—ասաց նա հանկարծ և ջուր
չինեց ամենին:

— Հահ, հահ, հահ,—յերկար ժամանակ, լացի ու վրեժխնդրութեան փոխարեն, շարունակվում եր ծիծաղը, մինչև վոր Չատոն դուրս յեկավ ձորից և հետևյալ հարձակողական խոսքերն ուղղեց Թուխինի տղի հասցեյին:

— Թուխինի տղեն սովորաբարի փութո՞ւնները թալանեց, խաս ու դումաշ ճոթը մարսեց, գողութենով ու ավազակութենով հարստացավ անամոթը, գեղին վոսկիքը շան ու գիլի—պրիստապիւնների ընթացք տալով, խալխին վերդումի տակ գցելով ազատվեց. հըմի ել յեկել ա, մի թիզ ջրովի հող ունեմ, ուզմա են ել խլի, տկլոր ու քաղցած յերեխանցս բերանի թիքեն հանիս կտրի: Այ անիրավ, անաստված, ետել լավու-թենիս փոխն ա, վոր գնացի, հավատս ուրացա՛ խաշ ու ավետարան խտտեցի, հոգիս դժոխքին տալով, քեզ համար սուտ յերդըմ կերա թե՛ «են գիշերը, յերբվոր փութո՞ւններն թալանեցին, Թուխնանց Թորոսն իրանց կրակ ընկնելու տանն արինքնումը, քնած եր...» Ըհ, հլա յավաշ, հենց իմանում ես թե պրծել էս: Դեհ, դու փորձիր հողս խլիր ու տես թե հիմի ել թարս չիմ յերդում ուտելու...

— Տղերք, յես զարմացել յեմ, Չատոն թամամ համարձակացել ա. ել թագուն բան չի թողնում. չիմ աշկար անելով, խայտառակում, բիարուս բեյսիրաթ ա անում նրան:

— Երված, խորովված ա, է:

— Բա ել չերվի. խղճի պապական են դանդիկ հոգեբն ես ու են խլեցին, հիմի ել մնացել ա մի կենա ջրովի հողի հուսով, եզ ել Թուխինի տղեն ա խլում:

— Այ դրա անհոգի հերն անիծած, մի ասող լի-

նի, թե տո անիրավ, դա ի՞նչ թամահ ա, վոր եզ դան աղքատի մեղքն ես ընկնում ու յերեխանց բերնի պատառը խչում. մեղք չի՞, տո անորեն թուրք, տո անգութ ջնուդ:

— Մեղք. Գրիստոսին խաշ հանող ջնուդն ի՞նչ գիդա, թե խաշն ինչ ա, նրա զորո՞ւթինն ինչ: Իա վոր մեղք իմանար, վոր աստված ունենար, հինգ թյումանի համար են ծեր մարդուն գինու տեղ թեգեփ կը խմացներ ու տանջելով կսպանե՞ր:

— Ո՛ր, անխղճմտանք, Հուդա ու արին խմող գազան ա դա...

— Հավ, տղերք, մենք ել գիտենք, վոր քյասիրի սեփական հողը Թուխինի տղեն ավաշկարա, որը ցեբեկով խլում ա, չա մեր հասարակութինն ե, պետկա լուի ու բան չասի:

— Ի՛ր, խեղճ միամիտ. մենք յա հասարակութին, յա հասկացող մարդ ունե՞նք. հի վտի բան ասիլ, հասարակության գլխավորներն ել նրանք չե՞ն, վոր գիշերիս՝ աղքատի ոջաղին ջուր ածելու համար Թուխնանց գինու կարասներումը լող են ավել շոգած գոմ շի պես...:

— Հանա:

— Խեղճ Չատո, յերբ վոր եզպես եր, բա ել ինչի՞ եր մաթրախի տակ ընկնում. շատագիլի ըստիցը գառը խել կլինի՞ր, կորած ա խեղճը:

— Ծաղր միք անիլ վոր, Չատոն գլխիցը ձեռք վերցրած ա յերեւմ. նա սառած ոձի պես տաքացել ա, կծիլու ա անպատճառ:

— Համբերութին ունենանք, տեսնենք թե տաքանալնու գյորա մի բան շինելու ա, թե հլե դուր

տեղը խայտառակ ա ղառնալու սաղ զեղի առաջ:
Այգիներէից խիստ հետաքրքրութեամբ հետեւում
եյին, վոր տեսնեն, թե Չատոն ինչպէս ե կովելու իր
սեփակման հողի վրա. արդարեւ արյուն թափելու ե:

ԺԳ.

— Ես ոսալ (վաս) դիվանի ե...

Հայհոյում եր Չատոն և ասում. «Հերիք չե՞ մե-
կել տարին համբերեցի, գլուխս թակելով բաղատեղս
խլեցին, հերու ել տաղ արի, խոտհարքս տարան, հի-
մի ել կանանչ արտս կոխ տալով ուզում են տափս
կտրեն. ես անգամ ել վոր սուս կենամ, գալու են
կնիկս ել խլեն. հետո՞, ել նամուս ա մնում ինձանում:
Լաֆս են չի, վոր յա մեռնեմ պրծնեմ, յա թե չե Սի-
բիր գնամ: Ել ուրիշ ի՞նչ հնար ունեմ, չե՞ վոր ջանիս
հասել ա...

Այս անմեղ սպառնալիքներով Չատոն մոտենում
եր հափշտակվող հողին:

— Մոտանում ա,—խորհրդավոր ձայնով իրար
մեջ շշնջում եյին մշակները:

— Մոտենում ել ա ու իսկի հանաք ել չի ա-
նում,—գարմացմամբ նկատում եր մի ուրիշը:

— Թող գա՞. դուք սո՛ւս ձեր բանին կացեք. ո՞՞՞
գլուխը վոր ցավի, կրերի ճանապարհի մեջ տեղը
կզնի. հալբաթ դրանն ել ա ցավում,—վրեժխնդրու-
թյան թուշնով լցված ասաց թորոսն ու դահձի աչքե-
րով շուրջը թափված կաղնի ցցերին նայեց, ապա
ձեռքերը յետևը դնելով, լուսթյամբ սկսեց քայլել:

Բայց այս լուսթյունն ավելի վտանգավոր եր թվում,
քան թե այն մեծ դազանակն ու աղմկաբար գայրույթը:

— Արե՛ս եմ յերդվում, հորս հողին վկա, վոր,
յեթե իմանամ յերկնքիցն ել գլխիս աստղեր են թափ-
վելու, վոր իմանամ թե Թուխնի տղեն ինձ կտոր
կտոր ել ա անելու, ելի իրեսս յետ չեմ թեքելու, ելի
իմ հողիցը պոկ չեմ գալու: Հողը իմն ա, տանուտերն
ել ա անիրավ, պրիստաֆս ել, սուղն ել, մեր յերեցն
ել, ո՛ւ թեկուզ աստո՞ծ ել, վոր եսպիս անիրաֆսերի
գլխին քարեր չի գցում...

Ինքնամոռացութեան մեջ, մի ժամից առաջ յեր-
կյուղածութեամբ յեկեղեցու պատի քարերից համբու-
րող Չատոն աստծուց ել վիրավորված, աստծուն ել
հանցավոր համարելով, վորքան մոտենում եր իր ար-
յունոտ հողում փորված փոսերին ու կոխ տված կա-
նաչած արտին և ջրեն արհամարհող, բանի տեղ չդնող
անիրավին, այնքան ավելի եր դառնանում:

— Անիրավ, անխղճմտանք, հենց քունն ես հա-
մարում, վոր իմ հողումը հլա ձեռներդ ել քամակիդ
դրած ես մանգալիս:

— Վոր ասում եյի թե հանաք չի. հրես դազա-
նակը վրա ա բերելու: Հասավ, թամաշա արեք,—կըրկ-
նում եյին հեռվից հետաքրքրվողները:

Չատոն փոսերին հասնելով, մշակների թիերից
մինը խլելով, սկսեց փոսերը հողով լցնել և հանդիմա-
նել նրանց:

— Տո տնավեր ու տնաքանդներ, բա դուք տե-
նում չեք վոր հողն իմ պապական հողն ա՞. ես առնոտ
տեղը դուք վո՞նց եք մշակութին անում. դեհ, հաջաթ-
ներդ հավաքեցեք, թե չե ձեզ ել նրան եմ խառնելու,—

աղադակում եր նա զայրագին և մյուսների բահե-
րիցն ել քաշում, ձիգ-ձիգ անում:

Այս միջոցին Թուխինի տղեն ել չկարողացավ
դիմանալ:

— Մգյար դու եդ քանի գլխանի ես, վոր համար-
ձակվում ես Թորոսի փոսերը լցնել տո քնչալ շան
տղա, — գոռաց նա և մի ահագին քարով գազանարար
հարվածեց Չատոյի կողքին:

Հարվածը խիստ ծանր եր. Չատոն առաջին ան-
գամ յերերվեց, լքլքաց և քիչ մնաց, վոր վայր ընկ-
ներ, բայց աշխատեց արիությունը չկորցնել դեռ: Նա
ուլժերը ժողովելով, թեև դազանակը խիստ տեղին
վրաբերեց, վոր վերջացնի անիրավին, սակայն վեր-
ջինս գլուխը փակցնելով ճարպիկությամբ, հարվածի
տակից դուրս պրծավ դեպի մի կողմն և նորից քար
առավ, իսկ Չատոյի դազանակն իջնելով քարին, շըրխ-
կաց ուժգին և կիսեն կոտրվելով, մի կտորը միայն
մնաց նրա ձեռքին: Չեռքին մնացած կտորը շարտելով
նա, և հափշտակելով բահերից մինը, նորից պտտեց
հարվածելու:

— Վահ, վահ, թամամ չտեսնված բան. տեղն ու
տեղը կրակ ա դառել Չատոն, աղերք:

Չարմանքով նկատում եյին հանդիսատեսները
և ուշադրությամբ հետևում նրան, վորից ամենևին
սպասելի չեր այնչափ համարձակությունը, վորպես
մի աղքատ, նվազած, ստրկացած ու վերին աստիճա-
նի հարստահարված մահկանացվից: Արդարև, մի եր
տեսել, վոր մի Չատո կամ մի Սահակ համարձակվեյին
հրապարակով և ամենի աչքի առաջ այնպիսի վերա-
վորանք հասցնել Թուխնաց Թորոսին. մի եր տեսել,

վոր այս հարուստ և անմատչելի, վե՛ջ միայն գյուղա-
կան տանուտերի, այլև գավառական բոլոր վոստի-
կանների և դատավորների կողմից ապահովված, նը-
բանց հետ միշտ նստող. ուտող, խմող, խորհող ու
խոսող, զի՛րք ստացած, գազանի պես առողջ ու ահու-
լի, առյուծի պես ուժեղ ու հաղթանդամ մարդու դեմ
հարձակում գործեր մի Չատո: Բայց աղքատության
ու չարչարանքի դառն բաժակն արդեն լցվել եր և
հրեշն այլևս չեր սարսեցնում Չատոյին. նա քնած
տեղում վերավորված ոճի նման տաքացել եր կարծես:
Չարքալ կյանքի տանջանքները, անտանելի վերավո-
բանքները, մարդկային պատվի այնչափ արհամարավի-
լըն ու վտանհարվելը և բռնի ու բացարձակ զրկողու-
թյուններն ամբարված նրա տանջված սրտում, այլևս
համբերության տեղ չեյին թողել, ամեն ինչ մոռաց-
նել եյին տվել նրան: Մոռացել եր և՛ կյանք, և՛ արև,
և՛ մահ, և՛ գարուն ու ծաղիկ, և՛, քաղցած ու պատա-
ռտուն-ցնցոտիներով հագիվ մերկությունները ծած-
կած կնոջն ու մանրիկ գավակներին: Վերջին համբե-
րությունից դուրս յեկած, նա գնում եր որհասական
կռիվ առլու իրենից անհամեմատ ուժեղի, մի կատաղի
դազանի հետ: Վերջինս, մոծակի խայթոցից շփոթված
առյուծի նման, մոնչում եր դեպի Չատոն, վոր գեռ
պտտում եր բահը, կրկին արհամարելով թե մահա-
շունչ և ահավոր հրեշտակի սպառնալիքը և՛ թե մութն
ու խոնավ և սառն գերեղմանը:

Յե՛վ, թեպետ բահը շըրխկաց Թորոսի գլխին,
ցնցեց հանդիսատես գյուղականներին և, արյունոտե-
լով, քերծեց ու տարավ ճակատի մի կողմը, սակայն
բահը վերջին անգամ միայն հասավ իր նպատակին,

իսկ այնուհետև յերկրորդ հարվածն ստանալով նրանից, իբրև վիրավորված գաղանից, դողողաց, չոքեց գետնին, ճիգ արավ կանգնելու, աշխատեց նորից ձեռքը ձգելու մի կողմը նետած բահը, սակայն վտաքերն այլևս չզիմացան տակին, իսկ գաղանացած թշնամին գոնե այդ դրության մեջ չխղճալով նրան, հափշտակելով փոսերի ցցերից մեկը, յերրորդ և վերջին կատաղի հարվածն իջեցրեց նրա գագաթին, ջախջախեց գլուխը, վերջ գրեց իր այնքան տանջված ու թուլնալից կյանքին:

Չատոյի սրբազան դին թավալվեց գետին, միքանի ահավոր ցնցումներ արավ և յերկու թե յերեք անգամ բերանը բաց ու խուփ անելով, աչքերը շրջելով, վերջապես հանգստացավ:

Հարան ընկավ գյուղը:

— Վայ, սպանեց, սպանեց, մեռավ, մեռավ...

Այլ ու ձախից իրար խառնված գոչում ելին ձայները: Ծուտով, թե այգետրերը և թե մերձակա դաշտերի աշխատավորները, մարդ, կին, ծեր, մանուկ, բոլորը ժողովվեցին և ամբոխը ծովացավ թորոսի պարտեզի առաջ, իսկ վերջինիս ընտանիքը և բարեկամները նրա կուռն ընկած, վորպես ծանր վիրավորվածի, տարան իր ամբարքը: Ամբոխը խոսում, ափսոսում, ախ ու վախ եր քաշում, գայրանում եր դաղբերի յեղեռնագործու թյան մասին, սակայն վրեժխնդիր յեղող չկար, վնչ մեկի մտքից չեք անցնում հրդեհել և ավերել այն հոյակապ տունն ու ընդարձակ այգին, վորոնք տասնյակ գոհերի և Չատոյների արյունով ելին կառուցված ու կանգնեցրած:

Հարայի ձայները կայծակի արագությամբ հա-

ստն նաև ողայի դռանը պարտատիրոջ համար մանած անող խեղճ նարզգի ականջին:

— Վայ, վայ, վայ... տունս քանդվեց, վայ...

Յերկինք հասնող ու ապառաժներ շարժող վողբ ու ձայնով անբախտ գեղջկուհին յերկու բուռնցքով ծնկներին տալով, յերեսն արնոտած, մազերը պոկ տալով գլխիցը, վորբացող մանկանցն ողայի դրանը թողած անտեր ձուտերի պես, նետահար յեղած թռչունի նման, ծվալեն ու ծղրտալեն գալիս եր դեպի արյունոտ հողը, ուր պատվավոր մահով ընկել եր իր լծակից ընկերը, ուր վերջնականապես փշուր փշուր ելին արել նրանց բախտի անիվը:

Թշվառը թուած հասավ դիակին, գրկեց ու սեղմեց նրան իր կրծքի միջին. ու, չզիմացավ, տարվեց կսկծից, նվազեց ու գնաց իրանից:

— Չո՛ւր, Չո՛ւր... շո՛ւտ, Չո՛ւր...

Բերին, սրսկեցին թշվառի գոռնաթափ յերեսին և մի կերպ մահից ազատեցին: Յե՛վ նա, յեղուկ կինը, ուժասպառ յեղած և կարկտահարված ծաղիլի նման վաղաժամ թառամած, տրորվում, կսկծում, գալարվում, ու մորմոքվում եր անվերջ:

Ա՛յ իմ անորենի ձեռն ընկած, այ իմ տանջված, քարացած, քաղցած ու ծարավ տեր, բա ասում եյիր թե վախիլ մի՞. բա ասում եյիր թե աստո՞ծ մեզ կը տեսնի, մեր դարդին դարման կանի՞. այ իմ տեր, մի խոսա՛, մի ձեն տուր, մի ասա տեսնեմ ո՞ւմն ես պահ տալիս ես յեթիմ բալեքդ, ես չիփլախ քորփեքդ, վոր լալիս են անհեր, անտեր, անհաց ու պարտքատեր: Վայ ինձ, վայ Չատո ջան. վայ իմ որին ու արեին, վայ իմ կորած բախտին, վայ իմ երված սրտին ու աչքերին, ես

ինչ եւմ տեսնում. ըզուզը գլխիցդ, արինը քթածակե-
րիցդ գուրս եւ թափվել ու յերկնքի ցողի տեղ, արյու-
նով արտոց ներկել: Հնդ, ջուր, սնոր, քոյ, յերկինք, գե-
տինք, գեղ, գեղականք, ասեցեք, ես ինչ եւմ տեսնում,
կուրացնեմ աչքերս, խլացնեմ ականջներս, թե միշտ
խորովեմ հաղես:

Մբտածորմոք, խզճահարող և այրող սոչորող այս
վողբին հանկարծ միախառնվեց նաև հետզհետե տեղ
հասնող մտերմների, հարեան այրիների, տատմեր պա-
ռավի և մանավանդ սրանց ձեռքով բերված անմեղ
մանուկների բարձրացրած աղեկաուր և սրտակեղ ճիչն
ու աղապահները, վորոնք, ել սիրտ չթողին, ապակու
պես ավին փշրեցին, ել արցունք չթողին, աճձրեի պես
ամենի աչքերից թափեցին և ել ապառաժ չթողին, բո-
լորը վողբով հաղեցին ու Պ. գյուզը վայոց ձոր շինե-
ցին:

Քարտիրտ, անզգա և անխիղճ մնացին միայն
հարային յեկած հարուստների շածփուրները լիզող և
Չատոյի իսկահյան յեղեռնագործները, արշան հետ միշտ
գործ ունեցող վոստիկանները, գատավորները, տա-
նուտերերը և պահապանները:

Այս բոլոր մահապարտները, այսինքն՝ անուսում,
ազեա ու անգիտակ ժողովրդի ջանն ուսող ցեցերը,
վաղուց յեկել և անարժան կերպով շրջապատել ելին
իրենց անարդարության և անիրավության յերեսից
ընկած անմեղ գոհին ու, ձևականապես, արտաքուստ,
ամբոխին խարելով, իբր թե իրողությունն ու ճշմար-
տությունն արձանագրում ելին իր տեղը, ուր հայ
գեղջուկին անհասնականալի ուսու լեզվով, հոգուտ թու-
խինի տղի, կեղծ ցուցմունքներ եր տալիս նրանց գե-

րի դարձած և իր հոր խաչը մոռացած գյուղական հայ
տանուտերը, և ուր քարացած հոգով, բայց մեռել ու-
տողի աչքերով հանդիսատես եր նաև մեր հայ զԳԵՏ
տերտերը:

Կաշառակեր վոստիկանների ձեռքով կազմած այս
կեղծ ու պատիր պրոսոկալը վոչինչ ոգուտ չունեցավ
վորբերի համար:

Թուխինի տղին, իբրև ծանր վիրավորվածի, ինչ-
պես արձանագրված եր պրոտոկոլում, առժամանակ
ամենևին տեղից չշարժեցին, իսկ Չատոյին շուտով գե-
րեզման իջեցրին:

Թվում եր թե գերեզմանում գոնե Չատոն հան-
գիստ կունենա, բայց նրա վոստիկաններին այնտեղ ել
հանգիստ չտվին. դատական քննիչի ձեռքով մի քանի
անգամ, անըուն վորդերի պես, նրա մարմինը շարժե-
ցին տեղից, հանեցին գերեզմանից, կտրտեցին ու քեր-
թեցին, և այդ ձևականությամբ ել իրենց գործը վեր-
ջացրին: Դեղին վոսկու, կարմիր գինու գեղեցիկ կա-
նանց և յուզողտ խորովածի յերկրապագուները Թուխինի
տղին ուզեցին, ու՝ արդարացրին, իսկ այրին ու վոր-
բերը մնացին քաղցած ու ծարավ այրվելիս մինչև 1905
որհնված թիվը:

Մտտ տաս տարուց հետո, այս թվականին միայն
գատաստան տեսնվեց գյուղում ուր, արդար ինչպես
և ամեն տեղ, հեղափոխության շնորհիվ սարսափ տի-
րեց հարստահարիչներին ու կաշառակերներին, վորոնք
ել չկարողացան հովանավորել Թուխինի տղին. և աստ-
ձու մի յերեկո Պ. գյուզի ամբողջ շրջակայքը հան-
կարծ վառվեց ու լուսավորվեց և մի քանի անգամ
հրացանի ճայթուններ լավեցին նրա այգում. Թուխինի

տղեն սպանված եր և կատաղի հրգեհը լափում եր նրա
թե այգին և թե տունն ու տեղը, վորով խորտակվեց
և նրն բախտի անիվը և այսիսով միայն վերականգ-
նըվեց մեր ժամանակի արդարադատությունը:

Իսկ խղճուկ վորբերը, վերջապես ստացան իրենց
պապական հողը:





ԳԻՆԸ 25 ԿՈՊ.

«Ազգային գրադարան»



NL0350268

